


1662-1668

17 1234

---

4-64













783

172





17

# ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ

ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ



Կ. ՊՈԼԻՍ  
ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼՆԵՑ

—  
1904

9068 Wh

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ Յ. ՄԱՏԹԻՍՅԱՆ  
Թիւ 27, Ֆինանսերիւր Էօզուշու, Կ. Պոլիս

6470-57

---

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک فی ۸ شوال ۳۲۱ و ۱۵ کانون اول ۳۱۹  
تاریخی و ۳۳۹ نومرولی رخصتنامہ سیلہ طبع اولتمشدر

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԳԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Համար 1795

## ԱՐՏՕՆԱԳԻՐ

Զերկասիրութիւն մակագրեալ « Բարոյական Կրթութիւն »  
 պատրաստեալ յաշխարհիկ բարբառ ի Հոգ. Տ. Վահրիճ Ծ. վարդապետէ Շահլամեան, իբր դասագիրք ի պետս մանուկ աշակերտաց Տարրական Խասընթացից Հայ վարժարանաց, Կրօնական Ժողովն Կեդրոնական Վարչութեան ըստ արդեանց պաշտօնական քննութեանց արժանի համարեցաւ արտօնել ի հրատարակութիւն և յանձնարարել ի կիրառութիւն Հայ վարժարանաց, իւր մեք ըստ այնմ հրամայեմք ի գործադրութիւն :

Մնամք Աղօթարար

Պատրիարք Կ. Պոլսոյ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ





Ի ՅԻՇԱՏԱԿ

ՍԻՐԵՅԵԱԿ ՀՕՐՍ

ՍԱՐԳԻՍ Յ. ՇԱՀԼԱՄԵԱՆԻ

ՎԱՂԱԳՈՅՆ ԹԱՌԱՄԵԼՈՅՆ

Ի 1876 ԱՄԻ



## ԵՐԿՈՒ ԽՕՍԲ



Ինչպէս կրթական ծրագրին և մեր փոքր աշխատութեան բազմատութիւնէն կ'երեւի, ըստ կարելւոյն խղճամիտ գործադրութիւնն է այս դասագիրքը Տարական Դասընթացքի՝ 7 էն 9 տարեկան տղայոց համար գծուած բարոյական կրթութեան գլխոյն :

Բայց յակահայ կամս ինչ ինչ շեղումներ, թէեւ աննշան՝ ըրած ենք, գրի առնելով զոր ինչ բերսնացի աւանդել կը հրամայէր ծրագիրը . և այս՝ կրկնակ պատճառով—տղոց ընթերցարանի մատենիկ մըն ալ տուած ըլլալու, ուսուցչաց ալ ուղեցոյց մը գծելու, որուն՝ քանզի ցարդ գոյութիւնը կը պակսէր, իբր դաս Բարոյական կրթութիւնն ալ՝ առանց բացառութեան ամէն վարժարաններու դասացուցակին մէջ տեղ և դեր չունեցաւ :

Կազմական կանոնագիրը օրտկան կէս ժամ դաս սահմանած է բարոյական դաստիարակութեան առ հասարակ, որ բաժնուելով երկուքի—կրօնական ուսման և բարոյական կրթութեան—շարաթական 3 ժամին  $1\frac{1}{2}$  ժամը կրօնի և  $1\frac{1}{2}$  ժամն ալ Բարոյական կրթութեան բաժին հանած է : Մենք այս միջոցը բարձրացուցինք չորս ժամի, երկուքը կրօնի և երկուքը բարոյականի ուսումներուն, ընդունելով թէ ուսումնական տարեշրջանը 32 շաբաթ է կամ 32 շաբաթի կ'իջնէ երբ զեղջուին արձակուրդի և տօնական ու պատահական օրեր, յորս աշակերտք դպրոց չեն երթար : Իսկ որոնք որ 32 շաբաթի իջած չեն կարծեր դպրոցական տարին ու

աւելի կը համարին , անոնք ուրեմն ճիշդ Յ ժամի իջած պիտի գտնեն ինչ որ մենք չորս ժամ կը համարէինք շաբթուան մէջ :

Մենք Յէ դաս Բարոյական Կրթութեան սահմանելով ուղեցինք որ ութ ամսուան մէջ աւարտեն սոյն դասագիրքը : Բայց ըստ որում միջանկեալ տօնական ու արձակուրդի օրեր շարժական ըլլալով կարելի չըլլար գծուած ծրագիր մը օրը օրին գործադրել որոշ ամսաթիւով , բաւականացանք ամիսներու բաժնելով հանդերձ Բարոյական Կրթութեան դասագիրքս , թոյլատրել որ փոխանցեն նախորդ ամիսէն մնացեալ դասերը յաջորդին ու այսպէսով՝ ՅՁ շաբաթի հաշուով և շաբաթը երկու ժամ դասով լրացունել դասընթացքը մէկ տարուան մէջ : Երկրորդ տարւոյն մէջ ներքեւի առածները - ուսուցչին համար ամէն դասի հարցարանին սակեղած մասնաւոր թելադրութեանց համաձայն - առիթ առնուլ միեւնոյն նիւթին անդրադառնալու և առաջին տարւոյ մէջ աւանդուած դասը կրկնելու , ըստ Կազմական Կանոնագրի և ըստ կրթական արդի պահանջմանց :

Գասաւանդութեան այս վերջին ոճը որուն հիման վրայ գծուած է Կրթական Ծրագիրը , ինչպէս ցարդ գուցէ ոմանց եւս գործադրելի և դիւրուսոյց չը թուի : Այնպիսիք պիտի կրնան շաբաթը մէկ դաս տալով բարոյական կրթութենէ , դասագիրքը երկու տարիէն աւարտել , բայց այնպիսիք , աւելորդ է ըսել , Կազմական Կանոնագրի գործադրողները և մեր աշխատութիւնը գնահատողները պիտի չկրնան համարուիլ :

Յամենայն դէպս , Ընթերցարան մըն ալ պիտի լինի այս դասագիրքը , Հայերէնի դասին համար , Բաւագիրք մըն ալ կցուած ըլլալով ի վերջ կոյս գործին , որ հարկ չէ ըսել , մատենիկիս մէջ յիշատակեալ աստղանիչ բառերուն բացատրութիւնները ունի լոկ , այս




կերպով բառի բաւական մթերք մըն ալ պիտի ունենայ տղան մտքին մէջ, տարեշրջանի փակումի ատեն : Այսպէս անոնք որ բարոյական կրթութեան ուրոյն տեղ չեն հաճիր շնորհել իրենց վարած վարժարաններու ծրագրին մէջ — ընդունելով հանդերձ թէ, ազատ լինի ուսուցիչ մը՝ խղճի մտօք գործել ուզած ատեն կրթական Մրագրէ դուրս ծրագիր գործադրել — անոնք ընթերցանութեան համար պիտի կրնան հիւրընկալել սոյն դասագիրքը որ ինչպէս չունի իր նախնիթացը, կը բովանդակէ սակայն նկատողութիւններ տարրական պարտականութեանց մասին, որք՝ հա՞րկ է յաւելուլ՝ ունին իրենց անհերքելի օգուտները ամենուն համար, մանաւանդ կազմուելու վրայ եղող մարդուն՝ տղուն համար ի վերջոյ, դասագիրքս հակառակ աշխատութեանց որք ինքնին կ'երեւին ալ, եթէ ինչ ինչ թերիներ ալ պարունակէ, սիրելի բարոյախօսներուն ներողամտութեան սպաստան՝ պիտի հաճութեամբ ընդունի այն ամէն դիտողութիւնները որք զայն կատարելութեան կը պատրաստեն, շնորհիւ և յաջողութեամբ Տեառն, երկրորդ տպագրութեան մ'ատեն :

ՎԱՀՐԵՃ Վ. ՇԱՀԱՄԵԱՆ

1903 Յուլիս 15

Մաքրի-Գիւղ, Կ. Պոլսոյ





# ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

## Ա. ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՐՏԻՔ

### 1. ԲՆՈՒԹԵԱՆ (\*) ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Սահակ ընկերներուն կը պատմէր թէ իրենց տունը շատ մեծ է : Ուսուցիչը հարցուց . այդչափ մեծ տունը ինքնիրե՞ն բուսաւ : Ո՛չ, պատասխանեց Սահակ, վարպետները շինեցին : — Ուսուցիչը ըսաւ. ուրիշ մեծ տուն մըն ալ չե՞ս տեսներ. ահա երկիրքը որ ծայր՝ սահման չունի, ահա ծովը որուն աչքդ կարածին չափ նայէ ու դեռ եղերքը (\*) չես տեսներ, լեռները որ ամպերուն (\*) մէջ կը ծրարուին (\*), հովերը (\*) որ տուն ծառ կը սարսեն (\*)՝ նաւերը կը քշեն, տես երկիրը որուն վրայ որչափ քաղես՝ չի հատնիր : Ասիկա ինքնիրե՞ն շինուած է, մարդ կրնա՞յ շինել զայն : — Ինծի կուգայ թէ, ըսաւ Սահակ, մարդիկ այս աշխարհը

չեն կրնար շինել, ըլլալու է մեծ մէկը որ զայն շինած ըլլայ : — «Այո, տղաքս, կայ, կրկնեց ուսուցիչը, ահա այդ մեծ շինողին Աստուած կ'ըսեն որ մեր հայրն է և մեզի կեանք տուաւ :

Առած . — Մէկ Աստուած, անթիւ (\*) ստեղծուած (\*):

Հարցարան . — 1 Ի՞նչ կը պատմէր Սահակ : — 2. Ի՞նչ խօսակցեցան ուսուցիչն ու Սահակ : — 3. Ի՞նչ դիտողութիւն ըրաւ ուսուցիչը : — 4. Սահակ լաւ ըրա՞ւ գիւտը : — Ո՞վ է եղեր Աստուած :

Բացատրել զարմացական այս առածը, արարածներուն վրայ մանրամասնութեանց մտնելով :

---

## 2. ԲՆՈՒԹԵԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

Սահակ ուսուցչին պատմեց թէ իրենց տունը գեղեցիկ եղաւ, վարպետները ներկեցին զայն՝ նկարելով (\*) զարդարեցին (\*), ջահեր կախեցին, վարպոյրներ (\*) ու գորգեր փռեցին, սալերով (\*) յաստակեցին (\*), ապակիով (\*) լուսաւորեցին : — «Տես, տղաս (\*), ըսաւ ուսուցիչը, մեր չորս կողմը եղած բաներն այ ձեր տան պէս զարդարուած են : Ահա՛ ծառը կուտայ ծաղիկ՝ տերեւ և պտուղ, ահա ձեր կանթեղին տեղ արև մը կայ՝ ցերեկը՝ երկինքի առաստաղէն կախուած և լուսինն ու աստղերն այ գի-



շերը : Տէս ձեր գորգին (\*) տեղ ծաղկազարդ (\*)  
դաշտերը (\*), որոնց մէջէն գետեր կը սահին (\*),  
անտառները (\*) որոնց մէջ թռչունները կ'երգեն :  
Ահա՛, ձմեռուան ձիւնը որ սաւանէն (\*) աւելի ճեր-  
մակ ծածկեր է երկիրը : — Ո՞վ այս բոլոր գեղե-  
ցիկ բաները կրնար ստեղծել և կարգի դնել : Սա-  
հակ պատասխանեց . «Մեր Հայրն Աստուած» :

Առած . — Աստուած օրը կուտայ, բարին ալ  
հետը : Երկիրը կը պատմէ Աստուծոյ փառքը :

1. Ի՞նչ տեսած էր Սահակ տան մէջ : — 2. Ի՞նչ  
խրատ հանեց ուսուցիչը անկէ : — 3. Ի՞նչ տեսաւ բնու-  
թեան մէջ : — 4. Ի՞նչ կուտայ, ծառը, երկիրը, դաշ-  
տերը, անտառները, ձիւնը : — 5. Ո՞վ կրնար ամէնքը  
ստեղծել :

Բացատրել առածները . — Մարդոց բարին նկատի  
ունենալով կարգադրութիւններուն և հեղինակ յոյց  
տալու է զԱստուած որուն տուածը միշտ բարի է :

---

### 3. ԲՆՈՒԹԵԱՆ ԻՍԱՍՏՈՒՆ (\*) ՅՕՐԻՆՈՒԱԾՔԸ (\*)

Օր մը երբ Սահակ իրենց պարտէզը ման  
կուգար (\*), տեսաւ որ հաստ ու բարձր ծառերու  
վրայ փոքր պտուղներ կային, իսկ հողին վրայ  
պառկած էին դդումն ու ձմերուկը բարակ կոթով  
մը : — «Այս ի՞նչ ծուռ բան է, ըսաւ Սահակ,

գղումն ու ձմերուկը մեծ ըլլալով բուսնելու էին ծառին հաստ բունին վրայ, իսկ խնձորն ու տանձը գետնի վրայ բարակ կոթին ծայրը : Այս ըսաւ չըսաւ, տանձ մը ծառէն քթին վրայ ինկաւ ու կակիժէն աչքէն արցունք դուրս թռաւ : — «Մեղայ Աստուծոյ, ըսաւ Սահակ, ես սխալեցայ, Աստուած ամէն բան իմաստութեամբ ըրած է : Եթէ այդ բարձր ծառէն տանձի տեղ ձմերուկ մը կ'յնար քթիս վրայ, գէմբս ամբողջ պիտի աւրէր, քթիս ոսկորը պիտի կոտրէր, աչքս պիտի կուրանար, ակռաներս պիտի թափէին և ես կարելի է մարելով մեռնէի ալ :

Առած. — Խելօքն ինչուան (\*) մտածեց, խեւն իր բանը տեսաւ :

1. Ի՞նչ անսաւ Սահակ պարտէզին մէջ : — 2. Ի՞նչ մտածեց : — 3. Տանձ մը ի՞նչ ըրաւ : — 4. Վերջը Սահակ ի՞նչ խորհեցաւ :

Բացատրել առածը. — Խելօքը ո՞վ է, և խելը կամ խենթը ով : Մարդուն համար անհնար եղած բաները հնարաւոր են Աստուծոյ համար : Խելօք կարծուածին կը մնայ ամօթը՝ որ խենդին պահուած էր :



#### 4. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ (\*)

Սահակ հարցուց թէ որչափ (\*), զօրաւոր է Աստուած : Ուսուցիչն ըսաւ . « Անկէ զօրաւոր մէկը չկայ աշխարհի մէջ : Այնչափ գետեր կը վազեն ծովը և Ան ուզած՝ հրամայած է որ կաթիլ մը ջուր ծովէն չաւելնայ, մինակ վազած ջուրին չափ ջուր շոգիանայ (\*) : Աստղերը՝ լուսինն ու երկիրս արեւուն շուրջ (\*) կը դառնան և կարգադրուած է որ իրարու չը զարնուին : — Փոթորիկներ (\*) կ'եղլեն ծովին մէջ, բայց ծովեզերքին չեն վնասեր : Գարուն՝ Ամառ՝ Աշուն ու Ձմեռ մեծի մը խօսքին հնազանգածի պէս իրարու կը յաջորդեն (\*), սկիզբէն 'ի վեր այս կանոնը (\*) փոխուած չէ : — Աստուած է որ անձրեւ և արեւ կը զրկէ, երկրագործին (\*) ալ : Կը կերակրէ բոլոր մարդիկը՝ կենդանիները՝ թռչունները՝ ծովի մէջ եղածները և բան մը պակասած չէ իրմէն : Միշտ նոյն կարող ու բարի հայրն է Ան՝ մեր հայրերուն ալ հայրը :

Ա.Ռ.Ս.Ս. — Աստուած մէկին որ ուզէ տալ, գլխուն՝ կունակին զարնելով կուտայ :

1. Սահակ ի՞նչ հարցուց : — 2. Ի՞նչ ըսաւ ուսուցիչը գետերու մասին : — 3. Փոթորիկներո՞ւ — 4. Չորս եղանակներու : — 5. Արեւի, անձրեւի : — 6. Եւ սնունդի մասին : — 7. Ո՞վ է Աստուած :



Բացասել առածը . — Աստուած իր շնորհքը կը զրկէ ամէն կարգի մարդոց :

## 5. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ (\*)

Աքըրըն առտուն կանուխ կը խօսի՝ արթնցնելու համար մարդը : — Լոյսը ճեղքուելուն պէս սոխակը (\*) ու դեղձանիկը (\*) ձայն ձայնի տուած կ'երգեն : Արեւուն հետ դաշտն են լեցուեր կենդանիներ : Եզն ու գոմէշը կը բառաջեն (\*), ձին կը խրխնջէ, ոչխարը կը մայէ : Վառնուկն ու հորթը կը ցատկուտեն : Կարապը (\*) մէյ մը երկինք կը թռի, մէյ մը ջուրն իջնելով կը լողայ : Արօսը (\*) ակոսներ կը բանայ ջուրին մէջ, իր թեւերով : Աղաւնիին վուվուն (\*) կը լեցունէ տունն ու գոմը (\*) : — Հովը հետզհետէ կը փչէ, տերեւները կը շարժին, ծաղիկներուն անուշ հոտը կը բռնէ չորս դին : Կանաչ հասկերը (\*) հովին տակ ծռած մշիկ մշիկ կը քնանան : Ամէնքն իրենց լեզուով բաներ մը կ'ըսեն, Աստուծոյ կ'աղօթեն : Ուրեմն մարդուն կը վայելէ՞ որ առանց աղօթքի մնայ : Խրատ չե՞ն ասոնց ամէնքը իրեն :

Առած . — Հաւը ջուր կը խմէ, Աստուծոյ կը նայի :

1. Ի՞նչ կ'ընեն աքըրը, սոխակն ու դեղձանիկը :

- 2. Ի՞նչ կ'ընեն չորքոտանիները: — 3. Ի՞նչ կ'ընեն կա-  
րապն ու արօսը ու աղաւնին: — 4. Անշունչ բոյսերը:  
— 5. Ամենքը ի՞նչ կը սորվեցնեն մարդուն:

Այս ժողովրդական առածին բարոյական կողմը բա-  
ցասրել՝ երախսագիտութիւնը հետեւելի շաւիղ մը ցոյց  
սալով:

## 6. “Ի՞ՆՉՊԷՍ ԱՂՕԹԵՄ”

Մարդ մը հարցուց Մակար ճգնաւորին (\*) թէ  
“Ի՞նչպէս աղօթեմ”: “Եղբայր, պատասխանեց Ս.  
Մակար, աղօթքի համար շատ խօսքի պէտք չկայ,  
բաւ է որ ձեռքերդ դէպի երկինք բարձրացունես  
ու ըսես. Տէր Աստուած թող քու կամքդ ըլլայ”:  
— Երբ չափազանց սիրտդ նեղուի, սրտիդ խորէն  
ըսէ, Տէր Աստուած օգնէ ինձի: Աստուած գիտէ  
քեզի պէտք եղածը: Ո՞ր հայրը տղուն աղաչանքը  
մտիկ չընէր ու չի կատարեր: Ու երբ տղան հօրմէն  
ձուկ ուզէ, հայրը օ՞ձ կուտայ: Աստուած ալ կու-  
տայ քու ուզածդ երբ դուն անոր զաւակը ըլլալ  
ուզես ու զինքը բարի հօր մը պէս սիրես:—Այս  
սիրոյ նշաններն են, միտք բերել միշտ զԱստուած  
գոնէ երեկոյ և առտու, անկէ շնորհակալ ըլլալ՝  
մինչև այն ատեն կեանք պարգեւելուն (\*) համար  
և խնդրել որ իր շնորհքը (\*) զրկէ:

Առած. — Հաւատքը (\*) սրտանց պէտք է, վրան  
քսածը բանի չի գար: 6420-57



1. Ի՞նչ հարցուց մարդն և որո՞ւ : — 2. Ի՞նչ պատասխան առաւ : — 3. Ի՞նչ ընելու է նեղսիրտ մարդը — 4. Ի՞նչ կ'ընեն հայրերը : — 5. Աստուած մեր ի՞նչն է և ի՞նչ պէտք է ընել : — 6. Մեր սիրոյ նշանները որո՞նք են :

Բացատրել առածը . — Ջանալ՝ ներքին զգացումները միշտ վառ պահելու համար Արարչին նկատմամբ : Մանկութեան ատենէն՝ անհաւատ մանուկը՝ վերջէն չի զօրանար կրօնական կրթութեան մէջ :

## 7. ԵՐԿԻՒՂԱԾ ՏՂԱՆ

Սահակ տեսնելով որ իր հայրը եկեղեցի չերթար ու տան մէջ ալ չաղօթեր, օր մը ըսաւ անոր . « Հէյր, ինչո՞ւ ինձի համար չես աղօթեր . իմ դասընկերներուս համար անոնց հայրերը կ'աղօթեն միշտ : Եթէ աղօթես, աւելի ազէկ պիտի ըլլամ » : — « Տղաս, պատասխանեց հայրը, ինչո՞ւ կը զարմանաս թէ քեզի համար չեմ աղօթեր, ես ինձի համար ալ մինչև հիմա աղօթած չեմ » : « Եթէ այնպէս է, աւելցուց Սահակ, ես քեզի և ինձի համար պիտի աղօթեմ որ երկուքս ալ ազէկ ըլլանք » : Ու ծունկի վրայ եկաւ և ձեռքերը բանալով սկսաւ աղօթքի . — Այս խօսքերէն սիրտը երած՝ հայրը տղուն քով գնաց, ծունկ դրաւ ու սկսաւ միասին աղօթել, կեանքին մէջ առաջին անգամ : Այն օրէն Աստուած իր օրհնութիւնը զրկեց և իր շնորհը անպակաս ըրաւ այդ տան վրայէն :

Առած . — Աստուած կանչողը փուճը չը մնար :  
Կուրօրէն (\*)՝ Աստուծոյ ճամբէն :

1. Սահակ ի՞նչ տեսաւ : — 2. Ի՞նչ պատասխան  
առաւ : — 3. Ի՞նչ աւելցուց ու ըրաւ : — 4. Հայրը ի՞նչ  
եղաւ ու ի՞նչ ըրաւ : — 5. Անոնց տունը ի՞նչ մտաւ :

Բացաւրել առածը . — Տարբեր օրինակներ ալ գտնել  
յորդորելով տղաքը , Աստուծոյ ճամբան բռնելու համար՝  
առանց իսկ արդիւնքին քննութեան :

## 8. ԱՍՏՈՒԾՈՅ ՎԱԽԸ


Բարտին(\*) վար նայելով իր քով տեսաւ շուշան  
ծաղիկն ու ըսաւ . «Բա՛, դուն ուրկէ՞» բուսար  
քովս , չես ալ խոսիր երկայն հասակէս , ոյժէս՝  
հաստ բունէս(\*) և կարիճութենէս» . — «Խնդրեմ՝  
մի՛ նեղանար , պատասխանեց շուշանը , ես մար-  
դու վնաս չունիմ , խոնարհ եմ , զիս քու ոտքիդ՝  
հովանիիդ տակ տնկած եմ որ հոտս տամ քու  
նոճի-հասակդ իվեր» : «Ի՞նչ համարձակութիւն ,  
ըսաւ Բարտին , կորի՛ր քովէս , հոտդ քեզ ըլլայ ,  
դեռ կեցեր ինքզինքդ ալ կը դովե՞ս , աներե՛ս» :  
— Խօսքը բերանը մնաց բարտինն , երբ Աստուած  
լսեց անդիէն , ու սաստիկ հով մըն է բրդաւ :  
Բարտին սկսաւ ճռնչել(\*) և մէկ երկու տատա-  
նելէ(\*) ետք գետնին վրայ փռուեցաւ : Շուշանն  
ալ ծռեցաւ , բայց երբ հովը դադրեցաւ՝ շուտով

ելաւ ոտքի : Իսկ Բարտին պառկած դեղնեցաւ ,  
փտեցաւ և լիկեցաւ :

Առած . — Աստուծոյ սուրբ գուլ(\*) է , ուշ կը  
կտրէ՝ բայց խորունկ կը կտրէ :

1. Բարտին ի՞նչ տեսաւ և ի՞նչպէս ըսաւ : — 2.  
Բարտին ի՞նչ աւելցուց : — 3. Շուշանն ի՞նչ պատաս-  
խանեց և ի՞նչպէս : — 4. Ի՞նչ պատահեցաւ : — 5. Բար-  
տին և Շուշանը ի՞նչ եղան :

Բացատրել առածը . — ՁԱստուած արհամարհողը ,  
աշխարհիս մէջ իր ոչնչութիւնը բարտիին պէս չճանչ-  
ցողը կը պատժուի , յապաղումը աւելի չարաչար  
վրէժխնդրութիւն մը անհրաժեշտ ընելով :





# Բ. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏԻՔ

## 9. ԲԱՐԻ ԵՒ ՉԱՐ

Երբ անուշ հոտ մ'առնես, համով կերակուր մ'ուտես, հանգիստ տեղ մը նստիս, աղէկ կը սեպես, չէ՞ Պօղոս. նոյնպէս եթէ անուշ երգ մը կամ նուագ(\*) մը լսես, մաքուր հագուիս, գեղեցիկ տեղեր պտրտիս, խաղաս, խնդաս, շատ հաճոյք կ'ըզգաս, այնպէս չէ՞: — Բայց եթէ գէշ հոտ առնես, անօթի մնաս, լեղի պտուղ ուտես, տաք երկաթ բռնելով՝ ձեռքդ այրես, վախցնող ձայն մը լսելով տոսկաս(\*), պաղելով մսիս, հիւանդանալով ցաւեր ունենաս, ասանք քեզի անախորժ պիտի գան: Գիտցիր որ ուրիշին համար ալ անանկ են: — Ինչ որ կուզես որ ուրիշները քեզի ընեն դուն ալ անոնց այնպէս ըրէ: Ձանա՛ որ քու ձեռքէդ ուրիշները բարիք վայելեն ու չար բաներէն փախչին ու ազատին:

Առած. — Բարեկամներուն բարիքը՝ մարդուս իրենն է:

1. Ի՞նչ բաներ բարի կը սեպես, Պօղոս: — 2. Գեո ի՞նչ բաներ բարի կուզան քեզ: — 3. Որո՞նք են չար կամ գէշ բաները: — 4. Ի՞նչպէս ընկերը վարուելու է: — 5. Գուն ի՞նչ ընելու ես:

Առածը ընդլայնել բերանացի:

## 10. ԲԱՐԻ ՂԵՒՈՆԻ

Ղեւոնդ վարժարանէն տուն գալուն, միշտ իւրարանցում<sup>(\*)</sup> մը կ'ըլլար տան մէջ. բարկացոտ էր, ուղածը արուելու էր, եթէ ոչ տունը տակնու վրայ կ'ընէր: — Երեկոյ մը Ղեւոնդ երգելով ներս մտաւ տունէն. ուրախ էր: Մայրը, հարցուց պատճառը: Ղեւոնդ ըսաւ. «Իպրոցէն դարձիս կոյր մուրացիկ մը տեսայ որ ճամբան կորուսեր էր ու անցորդներուն կը հարցունէր: Մարդ պատասխան չէր տար: Ես կոյրին ձեռքը բռնեցի, իսկ ընկերս ներսէս անոր պայուսակը<sup>(\*)</sup> շարկելով խորտ ու բորտ<sup>(\*)</sup> ճամբաներէն հանեցինք շիտակ ճամբուն վրայ: Կոյրը շնորհակալ եղաւ ու անցորդները գովեցին մեզ»: — Մայրը ըսաւ. «Ասկէ վերջ ուրախ ըլլալու համար, զաւա'կս, միշտ բարի եղիր այսպէս»:

Առած. — Մարդ մարդու քահանայ՝ մարդ մարդու սատանայ:

1. Ի՞նչպէս տղայ մըն էր Ղեւոնդ տան մէջ: — 2. Օր մը ի՞նչ տեսած էր և ո՞ր ընկերին հետ: — 3. Բարիք գործած էր ուրիշ ատեն, քանի որ միշտ ուրախ չէր: — 4. Բարիք գործելը սիրաբ կ'ուրախացնէ՞: — 5. Ծնողքը ինչո՞ւ հաւնեցան:

Բերանացի բացատրել առածը. — Քահանայի դիրք տալով Ղեւոնդի, ու սատանայի գործն ալ կոյրին պատասխան չտուող անզգայ անցորդներուն:



## II. Զ Ա Ր Ե Ր Ը

Յովսէփի և Գրիգորի միշտ հաւերուն քար կը նետէին, կատուներուն պոչէն կը քաշէին, անմեղ շնիկներուն ականջները կը կտրէին, թռչուններուն բոյները կը քանդէին, որք տանիքին ցուիքներուն(\*) տակ դրուած էին. — Օր մը հաւկիթէն նոր ելած ձագեր ինկան բոյնին մէջէն, ձագերուն մայրը շատ փնտուեց բայց չը գտաւ, վասնզի կատուն կերեր էր զանոնք: Դրացի պատուական մարդ մը այս պզտիկ անառակներուն ականջները քաշեց:— «Ինչո՞ւ կը քաշես, ի՞նչ իրաւունք ունիս, պատասխանեցին Յովսէփի և Գրիգորի»: «Իուք ինչո՞ւ կը չարչարէք այս խեղճ անասունները, ձեզ ի՞նչ ըրեր են», ըսաւ դրացին: Ամէն մարդ կը խորշէր այս չարերէն ու դրացի տղաք չէին կրնար ասոնց հետ զբօսնուլ(\*) իրենց ծնողքին դրած արգելքովը:

Առած. — Ինչ որ չես ուզեր որ ուրիշները քեզ ընեն՝ դուն ալ մի ըներ անոնց:

1. Ի՞նչ կ'ընէին Յովսէփի և Գրիգորի. — 2. Ի՞նչ եղան բոյնէն ինկած ձագերը: — 3. Ի՞նչ ըրաւ դրացի մը ու ի՞նչ խօսեցաւ: — 4. Ի՞նչ անունով կը ճանչնային զիրենք ամէնքը: — 5. Դրացի տղաք ինչո՞ւ չէին տեսնուեր:

Ընդլսյնել տուածը նախ բացասականը եւ ապա  
հաստատականը . — «Ըրէ՛, ինչ որ կու գես որ ուրիշները  
ընեն քեզ», և վերջնոյն վրայ ծանրացիր ու կանգ առ :

## 12. ՊԱՐՏՔ(\*) ԵՒ ԻՐԱԻՈՒՆՔ(\*)

Օր մը ակուան ըսաւ , «Կը ծամեմ՝ կը ծամեմ՝  
բան մը չեմ հասկնար , ստամոքսն է որ կը վայել-  
լէ , ալ չ'աշխատիմ պիտի» : Ստամոքսն՝ ըսաւ .  
«Ի՞նչ է շարունակ(\*) կը լեցնեն , կը պարպեն զիս ,  
բան մը չը մնար ինծի , երակները(\*) կը ծծեն ու-  
նեցածս» : — Աչքն ալ ըսաւ . «Ինչո՞ւ այսչափ նայիմ ,  
մտքին ծառա՞ն եմ , որ դուրսի եղածը իմացու-  
նեմ» : Թեւը նոյնպէս գանգաւեցաւ թէ կը յոգ-  
նէր միշտ ուրիշին համար և ոտքն ալ թէ մարմ-  
նոյն ծանր բեռը կը տանէր , և կ'որոշեն միաձայ-  
նութեամբ բան-թող ընել : — Օր մը չէր անցած  
վրայէն , աչքը ոլոր մտոր(\*) կը նայէր , ակուաները  
թուլնալ սկսան , թեւը վեր ելնելու ոյժ չունէր ,  
գլուխը կը դառնար և ոտքը քայլ մը չէր առներ :  
Միտքը ըսաւ այն ատեն : «Եթէ ամէն գործարան(\*)  
իրեն ինկած պարտքը չկատարէ , ապրելու իրա-  
ւունքը կը կորսնցընէ» :

Առած . — Եղինձին(\*) եղը՝ ամէն մարդ տեղը :

1. Ի՞նչ ըսաւ ակօսան : — 2. Ստամո՞քսը : — 3. Աչքը՞ : — 4. Թե՛ւր՞ : 5. Ուրքը՞ — 6. Ի՞նչ եղան լերջը : — 7. Ի՞նչ ըսաւ միտքը :

Բացասե՛լ առածը . — Մարմնոյն անդամները և կերակուրի մը տարրերը մանրանկար ճանչցնել՝ տան անդամներուն , երկրագործին , հացագործին արուեստներուն :

### 13. ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ(\*)

Դիտնեսիտսի(\*) ծառաները Պիւթիաս փիլիսոփան(\*) զրպարտեցին : Պիւթիասը մեռցնելու որոշում տրուեցաւ : Պիւթիաս քանի մը օր միջոց(\*) ուզեց մօտակայ քաղաք մը երթալով գործերը կարգի դնելու համար : — Իր ընկերը Դամոն փիլիսոփան՝ խոստացաւ մեռնիլ անոր տեղ եթէ Ժամանակին չը դառնար : Ժամանակը հասնելով , Դամոն անխուսով(\*) կ'երթար սպաննուելու երբ անգիէն Պիւթիաս հեւարով վազեց և դահիճին(\*) ձեռքը բռնեց որ ընկերը չըսպաննէ՝ քանի որ յանցաւորը ինք էր : — Բայց Դամոն կուզէր որ ինք մեռնի և բարեկամը ապրի : Այս անձնուէր բարեկամներու վէճը(\*) տեսնելով Դիտնեսիտս ներեց և գրկելով զանոնք՝ խնդրեց որ իրենց բարեկամութեան մէջ առնեն զինքն ալ :

Առած . — Բարեկամը նեղ օրին պէտք է :



1. Ո՞վ էր Պիւթիաս և ի՞նչ ըսուեցաւ իր մասին :  
— 2. Ո՞վ էր Դամոն : — 3. Ի՞նչ խոստացաւ : — 4. Ի՞նչ պէս կ'երթար սպաննուելու : — 5. Պիւթիաս և Դամոն ինչո՞ւ կը վիճէին : — 6. Ի՞նչ տեսաւ , ըբաւ և ըսաւ Դիոնեսիոս :

Բացաւրել առածը բարեկամութեան վրայ ամփոփ ծանօթութիւն մը տալով :

#### 14. ԵՍԱՍԻՐՈՒԹԻՒՆ(\*)

Լաֆօնթէն(\*) կը պատմէ թէ մուկ մը որջացեր է պանիրի տիկի մը մէջ և անուշ կընէր լուիկ մնջիկ(\*) : Սոված(\*) մուկեր օր մը ափ առին տիկն դուռը և խնդրեցին հարուստ մուկէն զթութիւն(\*) : — Իայց ան դուռը բանալով ըսաւ . «Կարծեցի թէ շէնք շնորհք(\*) մէկն է եկողը , անօթիներ , դուրս ելէք դուրս , չեմ հասկնար ի՞նչ կ'ըսէք , ես ալ խեղճ կ'ապրիմ» : Ու դուռը գոցեց առանց բըրդուճ(\*) մը պանիր տալու : — Կը պատմէ նաև թէ անօթի խեղճ ճպուռ(\*) մը գնաց մըջիւնին(\*) որ ահագին(\*) պաշարէն(\*) քանի մը ցորեն տայ իրեն ձմեռը անցնելու համար : Մըջիւնը ծաղրելով ճըպուռին ամառուան ծուլութիւնը՝ չտուաւ և իր հանգստեան նայեցաւ : Ահա՛ , իր անձը խորհող մուկ մը որ մինակ կը վայելէ տիկը և մըջիւն մը որ բաժին չհաներ ճպուռին :

Առած . — Պարապ ձեռքով ազայի մը տուն  
երթաս՝ ազան տունը չէ կ'ըսեն , ձեռքդ ընծայ(\*)  
մը ունենաս , ազա , ներս հրամմէ կ'ըսեն :

1. Ինչ կ'ընէր մուկը : — 2. Ինչ ըրաւ ու ըսաւ :  
3. Ճպուռն ինչ ըրաւ : — 4. Մըջիւնը ինչ պատասխա-  
նեց : — 5. Որո՞նք իրենց անձը կը խորհին :

Բացատրել առածը . — Այլքատին առջեւ գոց ցոյց  
տալով ամէն դռներ , իսկ ընծայաբերին կամ հարուստին  
ալ ամէն յարգ վերապահելով , ինչ որ եսասէր անձին  
ըմբռնումն է :

## 15. ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Երբ Յովսէփ մէկուն բան մը ըսէր՝ նախ «Նե-  
րեցէ՛ք , պարոն կամ տիկին» բառերը կ'ըսէր : Երբ  
տունը հիւր գար՝ խօսքի չէր խառնուէր և հար-  
ցում մը եղած ատեն՝ կրօպասէր որ խօսքն աւար-  
տեն և յետոյ պատասխանէ : — Հազարու , փունգտա-  
լու(\*) խընչելու ատեն անկին մը կը դառնար կամ  
սենեկէն դուրս կ'ելնէր : Սեղանին վրայ ամենէն  
ետքը ու վարտեղը կը նստէր և ուրիշներէ ջուր  
չէր ուզեր , անոնցմէ առաջ չէր խմեր և ուտելու  
չէր սկսեր : Տաքնալու ատեն հոգ կը տանէր որ  
ուրիշն ալ չմտի : — Կառքի , նաւակի(\*) , կամ տան  
մէջ հանգստաւէտ(\*) տեղը չէր փնտռեր և չէր  
նետուեր նստելու , ոչ ալ կը ջանար ամէն բանին



լաւը վայելել կամ առաջ վայելել : Դպրոցին մէջ նոյնպէս կը վարուէր . իր ընկերներուն շարունակ ճամբայ կուտար և ինք վերջէն կը քալէր :

Առած . — Բարի զաւակը օրօրոցէն յայտնի կ'ըլլայ :

1. Ի՞նչպէս սկսելու է խօսակցութիւն մը : — 2. Հիւրի մը հետ ի՞նչպէս վարուելու է : — 3. Ի՞նչ բան կը մտնան տղաք ընել՝ ուրիշները անհանգիստ չընելու համար : — 4. Տակաւին ի՞նչ պարտական են ուրիշներէն առաջ չչարժելու և լաւը ընտրելու համար :

Բացատրել առածը . — Յատկութիւններ կան զորս ի ծնէ կը ժառանգեն տղաք , բայց երանի՜ անոր որ մտիկ հոգմերը կը սրբազրէ կրթութեան շնորհիւ :

---

## 16. ՏՄԱՐԴՈՒԹԻՒՆ (\*)


Սահակ իր քնկերներուն արգելք կ'ըլլար որ աշխատին , եթէ մէկը գաղտնի խօսէր ուրիշի մը հետ , կ'երթար ականջ կը դնէր՝ կամ խօսքի կը խառնուէր : Կը մտնէր գոց դռնէ մը ներս , բայց բաց կը ձգէր փոխանակ գոցելու զայն : Երբեմն ալ հակառակը կ'ընէր : — Նմանութիւնը կ'ընէր թոթովի(\*) մը որ չէր կրնար լաւ հնչել(\*) բառերը՝ կամ շուտ խօսիլ . շիլի(\*) մ'որ նայած ատեն կը ծռէր աչքին ոտպը(\*) , կազի մը որ չէր կրնար քա-

լել առանց աջ ու ձախ ճօճելու(\*) : — Երբեմն փողոցէն տարեց(\*) ծերեր կ'անցնէին : Սահակ անոնց ճամբայ տալու և յարգանքով շարժելու տեղ ճամբան կը կտրէր, անցքը կը փակէր և մերթ կոշտութեամբ(\*) կ'ը դպէր անոնց : Այս անպաղպաւ վար(\*) բնութեան՝ մանաւանդ ուրիշին բնական պակասութիւնները երեսի տալուն համար Սահակ խստիւ պատժուեցաւ :

Առած . — Աղուէսը մեր մարագը(\*) ձագ է հաներ՝ մեր քերծէի(\*) հեզութենէն(\*) է :

1. Ուրիշին աշխատանքը՝ խօսակցութիւնը՝ տան կարգադրութիւնը վրդովելու է : — 2. Ուրիշին բնական թերութեանց առջեւ ի՞նչ պարտականութիւն ունինք : — 3. Ի՞նչ պարտական է տղայ մը ծերերուն : — 4. Պատիժը որո՞նց համար է :

Բացաւրել առածը . — Աղուէսը աշակերտին և քերծէն անոր դատարարակին կամ ծնողքին բաղդատելով և հասկցընելով թէ անպատիժ մնալը ո՞ր աստիճան համարձակութեան կը տանի տղան :



# Գ. ԾՆՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԻՔ

## 17. ԾՆՈՂԱՍԻՐՈՒՅԻՒՆ

Երբ դեռ մօրդ գիրկը կաթ կ'ուտէիր, Վրոյր, տեսայ որ քանի մայրդ չախէր քեզ, փոխանակ(\*) փախչելու՝ կը կպչէիր կը մնայիր մօրդ կուրծքին : Ասկէ կ'երեւի թէ ծնողքդ քեզ ամենէն մօտն է բոլոր մարդոց մէջէն : — Ամենէն շատ ան կը սիրէ քեզ, հագուստ ուտեստ կը հոգայ, ցուրտին՝ դողդրդալով, արեւին տակ՝ քրտնելով, հեւալով (\*) կ'աշխատի քեզ համար : Մայրը կուրախանայ երբ տղան իր ուզածին պէս շարժի, հօրը յոգնութիւնը կ'անցնի երբ տղան երեկոյին դիմաւորէ (\*) զինք՝ համբուրէ ձեռքը և պատմէ ինչ որ վարժարանին ու տան մէջ այն օրը ըրած է իբրև բարի տղայ : Ծնողք միշտ ներող են իրենց զաւկին, եթէ նա ամէն բան խօսի ու սխալին վրայ զղջայ : — Ուրախ կ'ըլլան ծնողք եթէ ազջիկը տան ծառայութեանց մէջ օգնէ իր մօրը և մանչը չյոգնեցընէ իր հայրը :

Առած . — Փուռ(\*) մը ձուազեղ(\*) եփէ տղան, հօրը պարտքը չի կրնար հատուցանել(\*) :



1. Ի՞նչ տեսեր էր ուսուցիչը Վրոյրի վրայ : — 2. Ծնողք մը ազու մը ս՞րչափ մօտ է : — 3. Ե՞րբ ծնողք մը կ'ուրախանայ : — 4. Զաւակ մը ի՞նչ ընելու է :

Այս առածին ոգին լայնօրէն եւ ոչ սառական իմաստով բացատրել . — Տղայ մը անկարելին կարելի ըրած ատեն ալ իր բովանդակ պարտականութիւնը հանդէպ ծնողքին կատարած լինցուցած չի կրնար ըլլալ :

## 18. ԸՆՏԱՆԵՍԻՐՈՒԹԻՒՆ

Առաջնորդ մը Ս. Ծննդեան տօնին՝ ողորմութիւն բաշխելու ատեն գիւղէ մըն ալ երեք որբեր բերել տուաւ որ հագուստ չինել տայ : Երեքին ալ հաց ու միս ապսպրեց(\*) բայց երբ երկուքը որոնք աւելի մեծ էին՝ կ'ուտէին, պզտիկը չէր ուտէր ու կը պահէր : Առաջնորդը հարցուց թէ ինչո՞ւ չուտէր, փոքրիկը պատասխանեց որ «մայրը հիւանդ է և ուտելիք չունի, անոր պիտի պահէ» : — Առաջնորդն ըսաւ, «Դո՛ւն, կե՛ր, մօրդ ուտելիք կը գրկեմ» : «Ոչ հայր Սուրբ, պիտի պահեմ մօրս, հիւանդ է» : Այս խօսքին վրայ լացաւ : — Առաջնորդը պնդեց(\*) թէ «Դուն անօթի ես՝ ուտելուդ նայէ՛, ահա՛ մօրդ համար ալ հաց ու միս, հետդ պիտի տանիս» : «Եթէ այդպէս է, ըսաւ որբը, ես ըլկ(\*) չոր հաց պիտի ուտեմ, մնացեալն ալ պիտի տանիմ մօրս :



Առած . — Մարդու սիրտին վկան(\*) աչքն ու  
բերանն է :

1. Ի՞նչ կ'ընէր ասաջնորդը : — 2 Պզտիկ տղան  
ի՞նչ ըրաւ : — 3. Ի՞նչ պատասխան տուաւ ասաջնորդին  
հարցումին : — 4. Ի՞նչո՞ւ կուլար տղան : — 5. Վերջը  
տղան ի՞նչ ըսաւ ու ի՞նչ ըրաւ :

Բացատրել առածը . — Գործնական սէրը շատ աւելի  
բան կ'արժէ քան պարզ խօսքերը : Մարդուս զգացումը  
սրտին մէջ թաքուն կը մնայ , իսկ աչքը կ'արտայայտէ  
զայն՝ լալով և բերանը չուտելով :

---

## 19. ՅԱՐԳԱՆՔ(\*) ԾԵՐԵՐՈՒ

Սրբուհի իր պապուն ու մամուն սիրելի էր , ոչ  
թէ մինակ իր պզտիկ ըլլալուն համար , այլ անոնց  
ջուր բերելուն՝ գլանիկին(\*) կրակ տալուն համար՝  
ու այն անուշ խօսքերուն համար զորս կ'ընէր ա-  
նոնց տկար եղած ատեն . « հոգ չէ , սիրելի պա-  
պիկ , կ'անցնի հիւանդութիւնդ ու կ'առողջանաս » :  
— Երբեմն մամուն ձեռքէն կը բռնէր , պառաւը իր  
թոռնիկին կուծնելով ոտքի կ'եղնէր : Պապը երբ  
տեղ մը զրկէր . Սրբուհի կը վազէր կ'երթար :  
Պատմութիւններ կ'ընէր պապը իրեն և այսպէս  
բարի աղջիկը Սուրբ գիրքէն(\*) շատ բաներ սորվե-  
ցաւ : — Կ'ըլլար որ մամը բարկանար , Սրբուհի մա-

մուն վզին կը փաթթուէր ու բարկութիւնը կ'իջնէր : Ըսած էին իրեն թէ ծերերն ու պառաւները յարգէ : Սրբունի ալ ոտքի կ'երնէր փողոցէն ծեր մը անցած ատեն :

Առած . — Ծերը տունէդ թող չի պակսի :

1. Ինչո՞ւ Սրբունի սիրելի էր և որո՞նց : — 2. Ի՞նչ պէս կը սիրցունէր պապուն, ի՞նչպէս մամուն : — 3. Ի՞նչ սորվեցաւ պապէն : — 4. Ե՞րբ կը փաթթուէր մամուն վզին : — 5. Ի՞նչ կ'ընէր ծերերուն :

Բացատրել առածը . — Ծերի մը առաւելութիւնը թուել, փորձառութեան, խմաստութեան, ազօթասիրութեան մէջ :

---

## 20. ԱԶԳԱԿԱՆԻ ՍԷՐ

Գիտե՛մ, կ'ըսէր Մաքրունի, որ հայրս առանձին(\*) կը բնակի(\*), մինչդեռ պապս ու հօրեղբայրս՝ ուրիշ տուն կը բնակին : Մայրս մեր տունն է, բայց անոր ծնողքը ուրիշ տեղ է : Թէ՛ հօրս կողմէ և թէ՛ մօրս կողմէ ունի՛մ շատ ազգականներ և ասոնք ալ հեռաւոր ազգականներ ունին : — Կը մտածեմ թէ ամենէն հեռաւոր ազգականներս ալ շատ տարիներ առաջ իրենց ազգականները ունէին որ մէկ ծնողքէ յառաջ եկեր են, մէկ լեզու խօսեր են մեզի պէս, մեզի պէս նոյն տեղը բնակեր,

նոյնպէս աղօթեր են, լացեր և խնդացեր են : — Ահա այս հեռաւոր ազգականներս և անոնց զաւակներն ալ այսօր կ'ապրին մեզի հետ, պէտք է որ սիրեմ զանոնք, անոնց հիւանդին՝ որբին հոգ տանիմ աւելի, անոնց թերութեանը ներող(\*) ըլլամ և վարուիմ այնպէս ինչպէս պիտի վարուէի իմ մօտիկ ազգականներուս հետ :

Առած . — Յառաջ մերը, յետոյ մերոնցը : Օտարին հացին իւղ քսող չ'ըլլար :

1. Ի՞նչ կ'ըսէր Մաքրուհի իր ծնողքին, իր ազգականներուն համար : — 2. Ի՞նչ ըրեր են այդ հեռաւոր ազգականները մեզի պէս : — 3. Ի՞նչ բնել կ'որոշէ Մաքրուհի հեռաւոր ազգականներուն սերունդին համար :

Բացառել սուսաներուն ոգին :

---

## 21. ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Յովակիմ շարունակ իր քոյրը կը շարշարէր(\*) մազերէն կը քաշէր, անոր վերաբերեալ բաները կ'առնէր կը պահէր, անոր պտուղը կը խէր(\*) ձեռքէն : Օր մը խաղալիքով զարկաւ քրոջը ձեռքին ու մատը կտրելով արիւնեց : Այլիկը լացաւ ու անկողին ինկաւ հիւանդ, ու ալ չեր ուզէր եղբորը նայիլ : — Մայրը Յովակիմը տարաւ քրոջը ու ըսաւ,



պիտի մեռնի քոյրդ շարութեանդ պատճառաւ(\*),  
դուն ալ քոյր պիտի չ'ունենաս, ես ալ առանց  
աղջկան՝ պիտի մնամ, ու հայրդ քեզ պիտի չը  
սիրէ ասկէ ետք : — Յովակիմ շատ լացաւ ու խոս-  
տացաւ որ երբ առողջանայ քոյրը, ալ չը դպչի  
անոր և ձեռքի կատակ անդամ չ'ընէ : Այն օրէն  
Յովակիմ յիշեց միշտ իր քրոջը հիւանդութիւնը ու  
բարի եղաւ այնուհետև, պահելով մօրը սուած  
խօսքը ու սիրելով քոյրը :

Առած . — Քոյրը կ'ըսէ եղբայր ունիմ, եղբայրը  
կ'ըսէ ես քոյր չունիմ :

1. Տան մէջ ի՞նչպէս կ'ապրին տղաք : — 2. Ձեռքի  
խաղերը ի՞նչ վնասներ կը բերեն : — 3. Մայրը ի՞նչ ըրաւ  
ու ըսաւ : — 4. Տղայ մը մօրը ըսածները ի՞նչպէս ըն-  
դունելու է : — 5. Յովակիմ խոստումը պահեց :

Բացատրել առածը . — Յայտնելով տկար սեռին  
հանդէպ պարտքը հզօր սեռին, քրոջական սուրբ ու  
անձնուէր սէրը եղբօր վրայ ու ասոր բիրտ անդգայտ-  
թիւնը, ուրկէ պրծելու է մանկական հասակին մէջ :

---

## 22. ԱՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ

Մարտիրոսի հայրը շատ կը նեղուէր անոր թու-  
շակը(\*) վճարելու, գերբ ու դպրոցական պիտոյքը  
հոգալու համար : Բայց Մարտիրոս փողոցներէն



աւելի համ կ'առնէր քան դպրոցէն, ուր եթէ երթար՝ կը կուտէր ընկերներուն հետ, կը ծաղրէր յառաջագէմները: — Ուսուցիչները ձանձրացած էին անօր մասին բողոքներ լսելէ, և ընկերները՝ բողոքելէ: Շատ անգամ պատիժ ընդունած էր բայց ուղղուած(\*) չէր: Տանը մէջ ուզածը պիտի ընէր՝ ուտէր և հագնէր: Տունը տակն ու վրայ կ'ընէր եթէ փափարածը չը կատարուէր: — Մարտիրոս անպիտան ձայնը կը հանէր լալով կանչոււրուաւելով, որպէսզի ծնողքը իր կամքը տեղը տանի, թէև ծեծի տակ կը կտարէին իր ոսկորները: Օր մը փողոցէն անցնող էշ մը հեծնել փորձեց, էշը պրացի(\*) զարկաւ անոր թեւին որ կտարեցաւ և ինք մարեցաւ ինկաւ:

Առած. — Չառնէ Աստուած մարդուն ահը(\*) սրտէն, ու ամօթը երեսէն:

1. Անառակը իր պարագան (ծնողքը և ին.) ի՞նչ վիճակի կ'ենթարկէ: —
2. Ընկերները և ուսուցիչները: —
3. Տո՛ւնը: —
4. Ի՞նչ միջոցներով: —
5. Վերջը ի՞նչ կ'ըլլայ:

Բացաւրել առածը. — Ամօթը երկու հզօր ազդակներ են անասնական և իմացական մարդը ուղղութեան տանող:

## 23. ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Զապէլին ծնողքը արգիլած էին իրեն ճրագին(\*) մօտենալ, բայց ան դպչելով կանդեղին ձգեց, քարիւղը վրան թափելով: Բռնկելու վրայ էր երբ մայրը վրայ հասաւ և բոցերը մարեց: — Նոյնպէս արգիլուած էր անոր կրակարանին(\*) շատ մօտ չնստիլ, բայց ան կրակին հետ խաղալով այրեց մատը, ասոր վրայ միտքը դրաւ ծնողաց խօսքը մտիկ ընել: Այս որոշումը շուտով մոռցաւ, երբ օր մը ուզեց երթալ լուալ իր պաճուճապատանքը(\*) այն գետին մէջ որ կ'անցնէր իրենց տան պարտեզին ծայրէն և ուր երթալ արգիլած էին ծնողքը: Խեղճ Զապէլ կամաց մը մօտեցաւ գետին ու յանկարծ ոտքը սահելով ինկաւ պաղ ջուրին մէջ, պիտի խեղդուէր եթէ տան շնիկը—որ իր քով էր — իր հաչիւններով վտանգը չժանուցանէր: — Ծնողքը իմանալով վազեցին եկան ու ջուրէն հանեցին փոքրիկ անհնազանդը, բայց անոր խաղալիքը գետը տարաւ: Զապէլ քանի մը ամիս հիւանդ պառկեցաւ ու այն ատեն՝ ալ ծնողքին հնազանդելու պարտքը ճանչցաւ:

Առած. — Մեծն ըսէ պզտիկը չ'մռէ(\*), ձիւնն այն ժամին պատէ:

1. Ծնողք ինչո՞ւ կ'արգիլեն մօտենալ ճրագին: —

2. Կրակին : — 3. Գետին : — 4. Շունը ի՞նչ պաշտօն ունի : — 5. Տղան ե՞րբ կը հնազանդի :

Բացասելի առածք. — Մեծին ըսածը իբր փորձառութեան արդիւնք յարգել և մտել պարտաւոր է. եթէ չուզեր փորձանքի մատնուիլ :

## 24. ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ


Արսէն շատ աճապարող (\*) էր : Միտքը դրածը կատարելու էր, սրտին ուղածը ընելու էր. ապա թէ ոչ կ'եռար, կ'եփէր, անհամբեր տղայ (\*) : 'ի զուր ուսուցիչը Արսէնին առջև կը գոյլէր հաւին համբերութիւնը ու կ'ըսէր, հաւը իր հաւկիթներուն վրայ 21 օր անձայն անտրտունջ (\*) նստած թուխսէ (\*) կը հանէ ձագերը : — Այս կարգի օրինակներ օգուտ չ'ունեցան իրեն, նորէն շէր սպասեր քիչ մը որ սեղանը դրուի այլ խոհանոց (\*) երթալով տաք տաք կ'ուտէր կերակուրը և բերանը կ'այրէր որ կը կսկծար : Առանց սպասելու որ քրտինքն անցնի, պաղ ջուր կը խմէր և գողալով ջերմէ (\*) անկողին կ'իյնար : — Վէճ մը ունեցաւ իր մէկ ընկերօջը հետ, առանց համբերելու որ կիւրքն անցնի և առանց տեսուչին բողբելու՝ ապեղ խօսքեր հանեց բերնէն և եթէ չ'արգիլէին՝ պիտի ծեծէր զայն :



Առած . — Համբերութեան մասը դառն(\*) է,  
բայց պտուղը մեզը ու շարար :

1. Աճապարտողը ի՞նչպէս կ'ըլլայ : — 2. Համբերող  
կենդանի մը ցոյց տուր : — 3. Արսէն, ինչպէս ամէն տը-  
ղայ ուտելու և — 4. Խմելու մասին ի՞նչպէս կը վարուի  
— 5. Վէճի ատեն ի՞նչ կ'ընէ, բայց ի՞նչ ընելու է :

Բացատրել առածը . — Ամէն տխրութիւն ու հա-  
ճոյք վախճան մը ունին դժուարին ու անհաճոյ : Իսկ  
ամէն դառնութիւն կը հանէ ուրախութիւն մը ապա :  
Նեղ ճամբային ծայրը ընդարձակ է , և ընդհակառակը,  
լայն ճամբուն ծայրը՝ նեղ է :





# Դ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐՏԻՔ

## 25. ԿՐԹԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Վարժուհին աշակերտներուն հարցուց թէ մարդոց մէջէն ամենէն շատ ո՞վ կը սիրեն : Հեղինէ ըսաւ . «Մայրս կը սիրեմ որ համեղ(\*) կերակուր ու անուշ կ'եփէ» : Արմինէ ըսաւ . «Աւելի կը սիրեմ հայրս որ շաքար գնելու դրամ կուտայ» : Կատարինէ ըսաւ . «Մեծ եղբայրս կը սիրեմ որ խաղալիք կը բերէ ինձի և կը պաշտպանէ զիս երբ մայրիկս ծեծել ուզէ» . — Վարժուհին ըսաւ . «Հայրիկն որ շաքարի դրամ կուտայ՝ վարժարանին մէջ աշխատելով է որ դրամ կը շահի, մայրիկը որ անուշ կ'եփէ, դարձեալ հոս կրթուած է, իսկ եղբայրը որ կը սիրէ քոյրը՝ մենէ սորված է պաշտպանել իր քոյրը» : — Անդիէն աշակերտուհի մը ըսաւ . «Քանի որ վարժարանն է որ այս ամէն աղէկ բաները կը պատրաստէ, մենք վարժարանը միշտ պիտի սիրենք և մեր ուսուցիչներն ալ մեր ծնողաց չափ պիտի յարգենք» :

Ա.Ու.Ս. — Կոյրը ինչպէս կը նայի Աստուծոյ, Աստուած ալ այնպէս կը նայի կոյրին :

1. Ո՞վ սիրելի է մարդոց մէջէն : — 2. Ի՞նչ պատճառաւ : — 3. Շահախնդրութիւնը մեզ ի՞նչ բան սիրցընել տալու է : — 4. Ի՞նչ ընելու են ուրեմն տղաք :

Բացարեւել առածը . — «Ինչ ցանես՝ այն քաղես» .  
«Ինչ փնտռես՝ այն գտնես» առածներուն իմաստովը :

## 26. ՈՒՍՈՒՑՉԻ ՍԷՐ

Պ. Սեպուհ գաս տուած ատեն շատ զուարթ էր , կը խնդար կը խնդացունէր . Աշակերտներն աւելի կը սիրէին անոր դասերը քան միւսներունը : Արդէն կը յիշէին(\*) թէ անոր քոյրը Օր. Վարդուհին ալ մանկապարտէղի մէջ խնդալով գաս կուտար , զիրենք կը սիրէր , միասին գնդակ կը խաղար՝ կը ծափէր՝ կը պարէր : — Աշակերտները այնպէս կը հաւատային թէ քոյր ու եղբայր՝ իրենց հօրմէն աւելի կը սիրէին զիրենք : Օր մը երբ երկու տղաք կաղամարի մը համար կը կռուրտէին , Պ. Սեպուհ ալ ջնայեցաւ անոնց երեսին : — Կռուողները տեսնելով որ ուսուցիչը միւս աշակերտներուն դառնալով գաս կուտայ ու անոնց կը խնդայ՝ կը խօսի , լացին և ներում՝ խնդրելով խոտացան անգամ մըն ալ չկռուիլ իրարու հետ : Պ. Սեպուհ ներեց և խօսք տուաւ նորէն առաջուան պէս զիրենք սիրել :

Առած . — Սուրբ ես նէ բարեխօսութիւնդ ,  
վարդ ես նէ հօտդ :

1. Ի՞նչպէս դաս կուտար Պ. Սեպուհ : — 2. Քոյրը  
ի՞նչպէս կը վարուէր : — 3. Ի՞նչ բանի կը հաւատային  
աշակերաններն : — 4. Պատմէ կաղամարի պարագան : —  
5. Պ. Սեպուհ ներե՞ց :

Բացաւել առածը — Սա իմաստով թէ ամէն  
պաշտօնեայ պէտք է ցուցնէ իր ձեռնհասութիւնը և իր  
պաշտօնին ամէն նրբութիւնները ապա թէ ոչ անբոյր  
վարդին և անբարեխօս սուրբին կը նմանի՝ լոկ անուն  
մ'ունենալով :

## 27. ԸՆԿԵՐՍԻՐՈՒԹԻՒՆ

Սուրէն՝ ուսուցիչէն իմացած էր թէ բոլոր դա-  
սընկերներուն ծծած օգը(\*) մէկ էր , ծնած ու  
մեծցած տեղը մէկ էր , խօսած լեզուն ու պաշ-  
տած Աստուածը մէկ էր : Կ'ըսէր ինքնիրեն , ինչո՞ւ  
մեր սիրտերը մէկ չըլլան ուրեմն : — Լսած էր թէ  
հօրը արդի(\*) բարեկամներէն շատերը անոր դա-  
սընկերներն էին : Կը հետեւեցնէր(\*) թէ իր ընկեր-  
ներէն շատերուն հետ պիտի մեծնար՝ պիտի գոր-  
ծէր : Ամենուն հետ քաղցրութեամբ կը վարուէր և  
եթէ երբէք մէկուն սիրտը նեղացնէր՝ անմիջապէս  
ներում կը խնդրէր : Երբեմն երբ նեղանար ինք  
ուրիշին , սխալեցաւ կ'ըսէր ու չէր ցաւեր : — Ամե-



նուն ուրախ ըլլալը կ'ուզէր, և կը ցաւէր որ վէճ  
կ'ունենային ընկերները, կամ գէշ կը խօսէին ի-  
րարու մասին: Վարժարանին մէջ տկարներուն դա-  
սերը կ'աշխատէր սորվեցնել: Աղքատ ընկերներուն  
օգնել, հիւանդներուն այցելել կ'ուզէր:

Առած. — Ըսէ ինծի թէ ո՞րոնք են բարե-  
կամներդ և ես ըսեմ՝ քեզի թէ ի՞նչ տեսակ  
մարդ ես գուն:

1. Ի՞նչ սորվեր էր Սուրէն ուսուցչէն: — 2. Մար-  
դիկ ո՞ւր կը բարեկամանան իրարու: — 3. Ի՞նչպէս կը  
վարուէր Սուրէն ընկերներուն հետ: — 4. Ի՞նչ փափաք  
ուէնէր և ի՞նչ կ'ընէր:

Բացատրել առածը. — Մէկու մը բարեկամները այն  
յատկութիւնները կամ մոլութիւններն ունին որոնց սերմը  
ծլած էր այդ անձին ներսը: Ուստի մագնիսաբար կը  
քաշուի դէպ ի անոնց կողմը: Շատ յարմար է առածը՝  
մէկը իր ընկերէն ճանչնալ:

---

## 28. ԲԱՐԻ ԸՆԿԵՐԸ

Սաատի պարտիկ բանաստեղծը երբ կը պար-  
տէր պարտէզին մէջ՝ աչքին զարկաւ կիսովին(\*) չոր-  
ցած տերեւ(\*) մը որ անուշ՝ շատ անուշ հոտ մ'ու-  
նէր: Առաւ գետնէն ու հոտոտեց զայն: Հարցուց  
տերեւին թէ «Քանի որ այսքան անուշ հոտ ու-



նիս, վարդ ես», — «Ո՛չ, պատասխանեց տերեւը, ես վարդ չեմ, բայց ժամանակ մը վարդին հետ ապրեցայ՝ անկէ այսպէս անուշ կը հոտիմ» : Ուսուցիչը ասիկա պատմելէն ետքը աւելցուց, բարի ընկերը սիրեցէք, տղաք, դուք ալ բարի եղէք որ բարիներն ալ ձենէ չփախչին : — Ո՛վ որ բարի տղոց կ'ընկերանայ՝ անոնց բնութիւնը կ'առնէ և անոնց պէս կը սիրուի ամենէն : Երբ ձեռքս կրակին մօտեցնեմ կը տաքնայ, կրակին տաքութիւնը մորթիս(\*) անցնելով, իսկ երբ նոյն ձեռքս սառին մէջ դնեմ կը մսի, կը սառի :

Առած . — Ագռաւին(\*) ընկեր եղողը ազբուսէն դուրս ելնելու չէ :

1. Ի՞նչ պատահեցաւ Սա'ատիի : — 2. Պատմէ խօսակցութիւնը : — 3. Ուսուցիչը ի՞նչ աւելցուց : — 4. Կրակն ու սառը ի՞նչ կ'ընեն մարմնոյն :

Պարզել առածը . — Նախ բացատրել բացասականը այսինքն «Ագռաւին ընկեր եղողը ազբուսէն դուրս ելնելու չէ»ն . ապա բացատրել հաստատականը «Լաւերուն հետ ընկերացողը միշտ անոնց դիրքին համապատասխան բարձրութեան վրայ կը մնայ և անոնցմէ կ'օգտուի» :

## 29. ԱՐԴԱՐԱՍԷՐ ՈՒՍՈՒՑՉՈՒՇԻՆ

Զարուհի ու Նուարդ միասին կ'աշխատէին, ձեռագործի(\*) մը վրայ : Վարժուհին պարտակա-

նութիւն տուած էր երկուքին լմնցնել զայն մինչեւ իրիկուն : — Բայց Նուարդ կը խաղար շատ անգամ, մինչդեռ Չարուհին կ'աշխատէր աւարտելու<sup>(\*)</sup> պարտականութիւնը : Վարժուհին տեսած էր մէկուն խաղալը և միւսին աշխատելը : Երեկոյին ձեռագործը լմնցած՝ տրուեցաւ վարժուհիին, որ Չարուհին բարձր նիշ<sup>(\*)</sup> մը և գովեստ տուաւ, իսկ Նուարդին երեսն անգամ չնայեցաւ : — Չարուհի խնդրեց վարժուհիէն որ Նուարդին ալ նոյնպէս նիշ գնէ, բայց նա ըսաւ թէ «Եթէ չ'աշխատողին նիշ ու գովեստ տամ, երեսին խնդամ ու սիրեմ, արդար չեմ ըլլար, չ'աշխատողն ալ ծոյլ կը մնայ և խեղճ կ'ըլլայ իմ պատճառաւ» :

Առած . — Հաստ ու բարակ մէկ գին է . վաճառքը բարակը մանողին<sup>(\*)</sup> :

1. Ինչ ըրին Չարուհի և Նուարդ : — 2. Վարժուհին պաշտօնին մէջ թերացա՞ւ : — 3. Չարուհին ինչո՞ւ կը խնդրէր Նուարդի նիշին համար : — 4. Անգութ չէ՞ վարժուհին : — 5. Ի՞նչպէս արդարացուց վարժուհին ինքզինքը :

Բացատրել առածը . — Եթէ չեղէր վարժուհին իր պարտականութեանը սահմանէն, պիտի ճշմարտութեամբ գովարդական առածը խեղճ Չարուհիի համար. ու քաջալերանք մը լինէր ծոյլ Նուարդին :

### 30. ՔԱՋԱԼԵՐՈՒԹԻՒՆ(\*)

Վարժարանի մը տեսուչը դասարան բերաւ տեղւոյն քահանան որուն պատմեց թէ շատ նիշ կ'առնէին ժամանակէ մ'ի վեր երեք աշակերտներ իրենց աշխատութեանց և կարգապահութեանց համար: — Տէր հայրը փափաքեցաւ անձամբ ճանչնալու, կանգ առնելով անոնց առջեւ՝ օրհնեց (\*) և դովեց զանոնք: Քահանան երթալէն վերջ՝ ուրիշ աղայ մը տեսուչին հարցուց թէ ինչո՞ւ երեքը օրհնուեցան և իրենք ոչ: — Տեսուչը պատասխանեց. «Այդ երեքը միայն յառաջագէմ, աշխատասէր էին: Տէր հօրմէն խնդրած էի զանոնք միայն սիրել և օրհնել, եթէ դուք ալ աշխատասէր ու բարի ըլլաք, նոյնպէս պիտի օրհնուիք:» Այդ օրէն բարի փափաք մը ունեցան շատեր երեքին նմանելու (\*), ուստի օր մըն ալ երբ թաղականները (\*) այցելեցին վարժարան, աշակերտներէն շատեր գովեստ լսեցին անոնցմէ:

Առած. — Հարկս (\*) հասարակաց (\*), պատիւս արժանաւորաց:

1. Պատմէ տեսուչին քահանային ըրածը: — 2. Ի՞նչ խօսակցութիւն անցաւ տեսչին և աշակերտին միջեւ: — 3. Ի՞նչ ընթացք բռնեցին աշակերտները և ի՞նչ շահեցան:



Բացառել առածը . — Հարկինքը կամ խնջոյքը ամենուն համար կ'ըլլայ բայց արժանաւորները մասնաւոր պատուոյ կը հասնին հոն : Հարկինքը վարժարանի և պատիւը գերազանցութեան իմաստով մեկնելով տղայոց երեւակայութիւնը տանիլ տարրեր օրինակներու միջոցաւ՝ ուրիշ խորհրդածութեանց :

### 31. ՔՍՈՒՅԻՒՆ(\*)

Գասարանին մէջ երկու տղայ յանցանք մը գործեր էին , ասոր համար պատիժ ստացան , իրենց բարոյագիտութեան դասը երեք անգամ ընդօրինակելու(\*) : — Գասընկերներէն մին ուրախանալով այս պատիժին վրայ , “Օ՛խ եղաւ ,” ըսաւ : Ուսուցիչը հարցուց թէ ո՞վ էր “ օ՛խ եղաւ ,” ըսողը Յակոբ իսկոյն(\*) պատասխանեց թէ Յովհաննէսն է : — Այն ատեն ուսուցիչը ըսաւ Յակոբին . ինչո՞ւ քու ընկերոջդ գէշ մէկ գործը մէջանդ հանեցիր : Յովհաննէս չար եղաւ որ երկու ընկերներուն պատժուելուն վրայ ուրախացաւ : Ի՞նչն ա՛լ աւելի չար եղար որ Յովհաննէսին մէկ տգեղ կողմը մէջանդ հանեցիր մատնելով , քսու եղար : Ազնիւ(\*) տղաքներողամիտ կ'ըլլան ուրիշին յանցանքին , ընկերոջ գէշ բնութիւնը ու տգեղ սովորութիւնը ամենուն ըսելու պէտք չկայ այլ ծածկելու՝ մոռնալու է զայն :

Առած . — Խօսքը արժաթ է , ըլլութիւնը ոսկի :



1. Յանցաւորներն ի՞նչպէս պատժուեցան: — 2. Ինչո՞ւ օ՛րս եղաւ: — 3. Ընկերը մատնելո՞ւ է: — 4. Ո՞վ աւելի չար եղաւ: — 5. Ի՞նչ է ընկերական պարտքը:

Բացասել առածը. — Մարդ աւելի փափաքող է ուրիշը քննադատելու քան արդարացնելու: Մարդ ա՛յնչափ չի քաշեր ուրիշը որ շատ անգամ իր խօսելովը կը պարսաւէ ուրիշ մը. ուստի պէտք է հետեւել առածին:


### 32. ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Յակոբ դասի միջոցին բարձր խօսեցաւ. ուսուցիչը դարձաւ այն կողմը ու հարցուց թէ ո՞վ է խօսողը: Յակոբ յանցանքը Յովհաննէսի վրայ նետեց, ըսելով. «Յովհաննէսն է» — Բայց Յակոբ չար տղայ մըն էր, միշտ իր ընկերներէն մէյ մը ասոր մէյ մըն ալ անոր վրայ կը նետէր իր յանցանքները: Ուսուցիչը ու իր դասընկերները գիտէին թէ Յակոբը ըլլալու է բուն յանցաւորը: — Ուսուցիչը ըսաւ. Զրպարտութիւն կ'ըսեն Յակոբին ըրածին, որ ինքզինքը պատիժէն ազատելու համար կ'ուզէ որ ուրիշները պատժուին. ասիկա ընկերսիրութեան դէմ է, ստախօսութիւն է, ասի չարութիւն է:» Լաւ է որ տղայ մը յանցանք մը չգործէ. իսկ եթէ գործեց՝ աւելի լաւ կ'ըլլայ որ ներում խնդրէ ուսուցիչէն իր յանցանքին համար և անգամ մըն ալ չի գործէ:

Առած . — Յոպոպն ինքը հոտած է , կը կարծէ  
թէ իրեն բոյնն է հոտած :

1. Ի՞նչ ըրաւ Յակոբ : — 2. Չարը ճանչցուած չէ՞ր :  
— 3. Ի՞նչ ըրաւ ուսուցիչը : — 4. Ի՞նչ է զբազարտու-  
թիւնը : — 5. Ազնիւ աղան ի՞նչ ընելու է :

Բացատրել առածը . — Գէշն իր յանցանքին համար  
կ'ամբաստանէ ուրիշները :



# Ե. ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՐՏԻՔ

## 33. ԲԱՐԵՍԻՐՏ(\*) ԳՐԻԳՈՐԸ

Գրիգոր դպրոցական ընկեր մը ունէր աղքատ, Երուանդ անուն՝ որ գիրք շունէր կարդալու : Սա շատ անգամ կէս օրին ճաշելու բան չէր կրնար բերել տունէն . հին էր հագուստը, կօշիկները ծակ էին :—Երուանդի հայրը շատոնց մեռած էր ու մայրը լուացք ընելով՝ կար կարելով ապրուստ կ'ընէր : Գրիգոր օր մը հօրը պատմեց Երուանդի խեղճութիւնը : Հայրը ըսաւ. տեսնեմ ի՞նչ ընել կը մտածես խեղճ տղուն համար :—Գրիգոր պատասխանեց «Պարտք շունի՞մ աղքատին օգնելու . ահա գրքիս վրայէն ինձի հետ պիտի սորվի դասը, կէսօրին միասին պիտի ճաշեմ և զգեստներէս հինները երբ անոր տամ, կը նեղանա՞ հայրիկ » : Հայրը համբուրելով զաւակը «Ապրիս տղաս », ըսաւ և խոստացաւ նաեւ կօշիկ ալ առնել Երուանդին որ խեղճ չի մնայ :

Ա.Ուած . — Աղէկութիւնը ըրէ ծովը թափէ(\*), ծովը եթէ չգիտնայ ալիքը կը գիտնայ :

1. Ի՞նչպիսի տղայ մըն էր Երուանդ և ինչո՞ւ : —



2. Գրիգոր ի՞նչ ըրաւ, ու ընել ուզեց : — 3. Հայրը հաւանեցա՞ւ, ի՞նչ խոստացաւ առնել :

Բացասել առածը . — Բարեգործութիւնը անկորնչելի գանձ մըն է, ծովն իսկ չընկուզեր զայն և կը փոխարինէ թէ իսկ անուղղակի ինչպէս ալիքին միջոցաւ, եթէ ոչ ուղղակի ծովին կողմէ :

### 34. ՈՂՈՐՄԱԾ ՔՈՅՐ ՄԸ

Լուսիկ և Աստղիկ քոյրեր էին : Ասոնք իրենց գասերուն լաւ աշխատելով դրամական պարզեւստացան իրենց հօրմէն : Շատ ուրախ էին՝ մանաւանդ Աստղիկ որ խաղալիք պիտի առնէր : — Բայց երբ դպրոց կ'երթային, ճամբան տեսան նիհար՝ դեղնած՝ աղքատ կին մը որ անկիւն մը կծկտած՝ ծիծ կուտար իր տղուն, խեղճ կինը իր մանկիկին մերկ մարմինը կուրծքին վրայ սեղմած՝ կը տաքցնէր զայն և իր պատուած հագուստովը կը պահպանէր, կինը կուլար : Աղջկանց անցնիլը տեսնելով, պաղատելով ըսաւ. «Սիրուն օրիորդներ, ողորմեցէք տղեկիս . » — Աստղիկ մեղքնալով ըսաւ . «Խաղալիք առնելէ ադէկ է որ այս խեղճ տղուն տամ ստակս » ու տուաւ : Խեղճ կինը արցունքը սրբելով առաւ դրամը, օրհնեց բարի աղջիկը և

գնաց անկէ : Աստղիկ խաղալիք չունէր , բայց աւելի ուրախ էր աղքատը յիշելով :

1 . Ո՞վ էին Լուսիկ ու Աստղիկ : — 2 . Ի՞նչ տեսան : — 3 . Ի՞նչ վիճակ ունէր աղան : — 4 . Մա՞յրը : — 5 . Մայրը ի՞նչ ըսաւ : — 6 . Աստղիկ թէ Լուսիկ աղքատասէր է : — 7 . Ո՞վ խաղատէր է :

Բացասել առածները . — Թշուառութիւն մը ամօքելու համար ոչ ոքի ներելի է անտարբեր ըլլալ , մէկը պէտք է իր ապրանքը տայ , միւսն ալ եթէ հարկ եղաւ՝ օգնէ : Եթէ եզին վաստակը եզին թողուի ուտելու , աշխարհի մէջ կարգ ու սարք կը վերնայ :

### 35. ԱՂՔԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ազնուական կին մը զաւակ մ'ունէր որ շատ տխուր (\*) էր : Գնաց դտաւ պարիկ (\*) մը և ըսաւ . «Նս զաւկիս տուի ամէն ինչ որ պէտք էր զայն ուրախացնելու համար և հիմա կը տեսնեմ որ դարձեալ սիրտը նեղ է , կը ձանձրանայ , ըսէ թէ ի՞նչպէս կրնամ ձանձրոյթէ (\*) անզատել զայն» : — «Ո՞վ կին , ըսաւ պարիկը , տղադ դժբաղդ է ետասէր (\*) և կամապաշտ (\*) ըլլալուն համար : Ամէն անգամ որ բան մը ուզէ տո՛ւր , բայց ստիպէ (\*) որ , զայն աղքատին տայ , Գուն երկրիս վրայ եղած ամէն բարիքը տուիր անոր , բայց մոռցար

տալու ամէնէն վեր եղած բանը որ է . “Աղքատաւիրութիւնը” : — Այն օրը որ զաւակդ աշխատի ուրիշին համար, իրմէն զրկէ և աղքատներուն տայ, իր աղքատ բարեկամները ուրախացնէ, այն օրը ուրախ պիտի ըլլայ ինչպէս խայտիտը (\*) որ կը թուչկօտի (\*) խնդումէն (\*) :

Առած . — Տղաս, ըսին, ինչո՞ւ կուլաս, ըսաւ .  
խօսքս կ’անցնի անոր համար կուլամ :

1. Որո՞ւն էր և ի՞նչպէս զաւակը : — 2. Պարիկին ի՞նչ ըսաւ ու ի՞նչ եղաւ պատասխանը : — 3. Զանձ-  
բոյթը ի՞նչպէս կը մեռնի : — 4. Աղքատասէրը ի՞նչ կ’ըլ-  
լայ միշտ

Բացատրել առածը . — Մանկան քմահաճոյքը կօտ-  
րելով, ճկելով և մանկան մէջ առաքինութեան սերմերը  
ցանկելով :

---

### 36. Հ Ի Ի Ա Ն Դ Մ Ը

Ներսէս չարաչար կը յոգնէր զաւակներուն հացը ճարելու համար : Շրջուն փերեղակ (\*) ըլլա-  
լով՝ փողոցը մտեր էր ձմեռը, և հիւանդ՝ անկողին  
ինկած էր : Իր աղաքը հաց չունէին, խեղճ հի-  
ւանդն ալ դարման (\*) չունէր : Յուրա ու բուք  
ամէն դի, առողջը անկողնի մէջ կը սառէր, ո՞ւր  
կը մնար հիւանդը : — Ներսէսի կինը շուարեր մնա-



ցեր էր, չէր գիտեր ի՞նչ ընէր : Գնաց սակայն՝ աղա-  
չեց բարի բժիշկի մը որ առանց այցեզին ուզելու՝  
եկաւ նայեցաւ Ներսէսի, բայց Աղքատախնամ  
չկենալուն համար անոր մէկ դրացիին խմացուց  
հիւանդին վիճակը : — Դրացին ինքն ալ աղքատ,  
հանգանակելով(\*) դեղ գնեց . իսկ անոր զաւակ-  
ները իրեն հետ տուն տանելով ըսաւ իր տղոց .  
«Ահա, ձեզի եղբայրներ, տղաքս» : Եւ շիտակը,  
Ներսէս կարծես աւելի առողջացաւ դրացիին ըրա-  
ծը լսելով, քան բժշկին պատուէրները կատարելով :

Առած . — Ծերը հօրդ պէս պատուէ, կինը  
մօրդ պէս, տղան զաւկիդ պէս :

1. Ներսէս ի՞նչ կ'ընէր ու ի՞նչ եղաւ : — 2. Տանը  
վիճակը բացատրէ : — 3. Կինն ի՞նչ եղաւ : — 4. Բժիշ-  
կը : — 5. Դրացին ի՞նչ ըսաւ տղոց : — 6. Ներսէս ի՞նչ  
պէս առողջացաւ :

Բացաւրել առածը . — Ամէն առթիւ զօրաւորին  
կատարելիք պարտականութիւնը պէտք է լինի ամենէն  
տկարներուն ( ծեր, կին, տղայ ) հանդէպ՝ առածին մէջ  
նշանակուած ձեւով :

---

### 37. ԱՆԿԵԱԼ ՄԸ

Բարի վաճառական մը երբ կը ճամբորդէր  
աւազակներէն թալլուեցաւ (\*), վիրաւորուեցաւ (\*),

ու գեանի վրայ՝ արեւի գիմաց փռուած մնաց :  
Շունչը հազիւ (\*) կ'եղնէր :—Մարմնոյն ոչ մէկ կողմը  
իրն էր , խելքը գլուխն էր միայն , աչքին առջեւ  
կը բերէր սիրելիները որոնցմէ պիտի զրկուէր մեռ-  
նելով , միաքը կը բերէր իր վախճանը (\*)՝ այսպէս  
ճամբուն վրայ ձգուած անօգնական . սաստիկ ծա-  
րաւի էր պիտի աղաչէր պաղատէր (\*), անցորդներէն  
Աստուծոյ սիրուն պուա մը ջուր (\*) ուզելով , բայց  
եկող գացող չկար :—Խեղճը յուսահատ (\*) ալ աչքը  
գոցելու վրայ էր՝ երբ յանկարծ ոստիկան մը ան-  
ցաւ , տեսաւ վիրաւորը , քովը վազեց , վէրքերը  
կապեց և շալկելով փոխադրեց (\*) մօտակայ գիւղ  
մը ուր նամակ գրեց անոր գիւղը և անոր ազգա-  
կաններուն իմացուց պատահած դժբաղդութիւնը :

Առած . — Քառասուն գող մի մերկը (\*) չեն  
կրցեր կողոպտել (\*) :

1. Ի՞նչ պատահեցաւ վաճառականին : — 2. Պատմէ  
վիճակը : — 3. Մարաւը : — 4. Ի՞նչ ըրաւ ոստիկանը :

Բացատրել առածը . — Հարստութիւն ու հանգիստ  
գիրքը միշտ նախանձորդներ կ'ունենան և հակառա-  
կորդներ . իսկ աղքատը և մերկը պատճառ չունին խոռ-  
վելու :

### 38. ՏՆԱՆԿՆԵՐԸ

Նոր տարիի իրիկունը Պետրոսի և Աշխէնի ծնողքը զիրենք կաղանդեցին դրամ տալով որ շաքար և խաղալիք առնեն : Փոքրիկները ուրախութենէ քուն չեղան : — Կէս գիշերին երբ իրենց ծնողքը եկեղեցի գացին՝ Պետրոս և Աշխէն անոնց հետ էին : Քարոզիչը պատուիրեց որ Քրիստոնեան Նոր տարին նոր բարիք մ'ընելով սկսի . և յիշեցուց թաղին աղքատները որոնք հաց չունէին ասանկ օրով մը , պատառած զգեստով էին , ցուրտին ածուխ ու փայտ չունէին : Պետրոս ու Աշխէն այնչափ ցաւեցան աղքատներուն վրայ որ իրենց միտքը դրին խաղալիքի ու շաքարի դրամը տալ անոնց : Հայրը ուրախացաւ այս մտքին վրայ : — Երկրորդ օրը ուսուցիչը գովեց Պետրոսն ու Աշխէնը իրենց ընկերներուն առջեւ որոնք անոնց պէս իրենց կաղանդչէքին մէյմէկ մասը բերին ուսուցչին , աղքատ տղոց բաժնելու համար :

Առած . — Շատ սուտղը կուտայ գանձէն , քիչ սուտղը աղքատ անձէն :

1. Ի՞նչ եղաւ Կաղանդի իրիկունը : — 2. Կէս գիշերին : — 3. Քարոզիչը ի՞նչ ըսաւ : — 4. Պետրոս և Աշխէն ի՞նչ մտածեցին : — 5. Հայրն ու ուսուցիչը ի՞նչ եղան : — 6. Աշակերտները ի՞նչ ըրին իրենց կաղանդչէքները :



Բացասել ժողովրդական առածին իմաստը յոր-  
դորելով որ ամէն ոք հարուստ աղքատ հաւասարապէս  
օգնող և կարեկից ըլլան թշուառներուն և տնանկներուն:

### 39. ԱՅՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՏԱՆ (\*)

Համբարձման (\*) օրը Ս. Պատրիարք (\*) Հայրը  
Ս. Պատարագէն (\*) ետք, այցելեց և օրհնեց հի-  
ւանդանոցին սրահները (\*), ուր կային պատուար-  
եալներ, ծերեր, դողահարներ (\*), սուբի վրայ  
կայնելու ոյժ չունեցողներ, նեղսիրտներ, շատա-  
խօսներ, գանգատողներ: — Հոն էին հիւանդներ,  
սիրելիներէն զուրկ անկողնոյ մէջ լացողներ, խօ-  
ցոտներ (\*), ցաւէն շնչասպառներ, տագոյններ (\*)  
նիհարներ: Հոն էին մտքով խանգարուածները (\*),  
որոնք մէյ մը կուլան մէյ մը կը խնդան, յիմարը  
որ կ'աղաղակէ (\*), կ'երգէ, կը բարկանայ. խենթը,  
չլթայի զարնուածը, զսպող (\*) հագուստ հագնողը:  
— Ապա անցաւ որբանոցը և օրհնեց որբը՝ մօր համ-  
բոյրը չը գիացողը, հօր սէրը չտեսնողը, ծնած՝ ցատ-  
կած՝ խաղացած տեղերէն հեռացողը:

Առած. — Մարդը մարդով, երկուքն Աս-  
տուծով:

1. Ի՞նչ կ'ըլլայ Կ. Պոլսոյ մէջ: — 2. Ս. Պատրիարք  
Հայրը ի՞նչ ըրաւ: — 3. Ի՞նչ պէս են ծերերը: — 4. Հի-

ւանգնե՞րը : — 5. Որքե՞րը : — 6. Միտքով խանգարած-  
նե՞րը :

Բացատրել առածը . — Թէեւ մարդը կ'օգնէ ընկե-  
րին բայց մատուցած օգնութիւնը Աստուծոյ գտած է և  
իրմէ ոչինչ ունի :

#### 40. ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ Ս. ՀԱՅՐԱՊԵՏ

Ուսուցիչը օր մը ըսաւ . «Աստուծոյ կ'ընդու-  
նինք(\*) ամէն բարիք որ բաժին հանենք ուրիշին  
ալ» . ու պատմեց մեծն Ներսէսի բարիքները հի-  
ւանդներու որոնց հիւանդանոց բացաւ որպէսզի ան-  
դարման(\*) մնալով չը մեռնին : — Պատմեց բացած  
անկերանոցները(\*) ծերերու, կաղերու, կոյրերու որ-  
պէսզի անխնամ(\*) չը մնան, որբանոցները՝ որբերու՝  
անոք(\*) ու չքաւոր(\*) տղոց համար որ երեսի վրայ  
մնալով փողոցները չը մուրան : Վերջապէս պատ-  
մեց ուրկանոցները(\*) ուր Ս. Ներսէս լեցուց բարոտ-  
ները(\*) որք տուներուն մէջ չէին ընդունուեր : — Այս  
խեղճերէն շատեր իր սեղանը կը նստեցնէր, ու  
անոնց դարմանը ինք կուտար իր օրհնեալ ձեռ-  
քով : Ուստի Մեծ ըսուեցաւ : Ով որ իր ձեռքէն  
եկածը կ'ընէ և իր ունեցածէն մաս կը հանէ ու-  
րիշին, ան Ներսէսի զաւակն է :

Առած . — Մարդ կայ որ հազար կ'արժէ(\*),

հազար կայ որ մէկը չ'արժեր : Ան որ հազար կ'արժէ, անգէտին քով փող մը չ'արժեր :

1. Ի՞նչ ըրաւ ուսուցիչը : — 2. Ո՞վ և ինչո՞ւ հիմնեց առաջին հիւանդանոցները : — 3. Անկեկանոցները : — 4. Որբանոցները : — 5. Ուրկանոցները : — 6. Ի՞նչպէս կը վարուէր ինք : — 7. Ո՞վ կը լինի զաւակ Մեծն Ներսէսի :

Առածը բացատրել օրինակներ գտնել թելադրելով :





## Զ. ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՐՏԻՔ

### 41. ՄԱՔՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ (\*)

Վարդուհին մազերը միշտ սանտրուած կ'ըլլային : Եղունգները կտրուած կ'ըլլային ու ձեռքին վրայ կամ մատներուն ծայրը մեղանի բիծ (\*) չէր ըլլար : Աղքատ ըլլալուն՝ հին էր հագուստը և քանի մը կարկտանով, բայց կեղտոտ չէր ու պատրուած չունէր : — Ընկերուհիները իր կոկիկ ու մաքրասէր ըլլալուն շատ կը սիրէին . բայց եղբայրը՝ Մովսէս, ո՛հ, բոլորովին հակառակն էր : Ուրէն գլուխը կեղտոտ էր . կօշիկ չէր դիմանար : Ամառը վրան-գլուխը փոշի(\*) էր ձմեռն ալ ցեխ(\*), երեսը մեղանոտ էր եղունգներուն մէջ աղաբ բոյն(\*) դրած էր : Ծարունակ քիթը կը խառնէր , բայց մաքրած ալ չունէր : — Գիրք տեսարակ գրասեղան պատուած՝ կեղտոտ , ամէն ընկերներուն զգուելի ըրին զինքը : Ուստի ուսուցիչը անոր պարտականութեանց տեսարակները շատ անգամ ձեռքն առնելու կը դըժուարէր(\*) :

Ա.ուած . — Խնկտաին(\*) ցուրտը կամ ծուխն(\*) է պատճառ(\*) :

- 1 . Մաքրութիւնը ի՞նչպէս կ'ըլլայ մարդուն վրայ :  
— 2 . Զգեստի վրայ : — 3 . Մաքրասէրը կը սիրուի՞ :  
— 4 . Կեղտոտը ի՞նչպէս կ'ըլլայ իր անձովը : — Զգեստովը : — 6 . Վարժարանին մէջ : — 7 . Կեղտոտը կը սիրուի՞ :

Բացատրել առածը . — Մոլին՝ թերացողը միշտ արդարացում մը կը ճարէ օգէն՝ ջուրէն՝ միջավայրէն՝ պարագայէն , եթէ ամառ է՝ տաքութիւնը պատրուակելով , եւ եթէ ձմեռ է՝ ցուրտը :

## 42. ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Յարութիւն կ'ուզէր դասերը լաւ պատրաստել եւ ուսուցչէն սիրուիլ , բայց երբ վարժարանէն տուն կը դառնար , պզտիկ քրոջը Արմինէին հետ պարտէղին մէջ կը խաղար եւ դասը պատրաստելու կը մոռնար : — Երբ ընթրիքն (\*) ըրած կ'ըլլային՝ կուլար ու դասը չէր սորված եւ ուսուցիչը զինքը պիտի չը սիրէր : Խեղճ Յարութիւնին քունը կը կուխէր , աչքերը կը գոցուէին , բայց ինք դաս պատրաստելու մտքով գրքին վրայ ծռած կը մնար : Ո՛չ կը կարդար , ո՛չ ալ կը քնանար : — Ուսուցիչը հարցուց ընկերներուն թէ ի՞նչ ընելու է Յարութիւն որ չի նեղուի : Աշակերտներէն մին պատասխանեց թէ պարտէղին մէջ խաղալու տեղ դասը սորվելու էր : Այո՛ , ըսաւ ուսուցիչը , բայց փափաքը չը բաւեր , ամէն բան իր ատենին ընելու է :

Առած . — Չմեռը բազմեպան ըլլաս , ամառն  
այգեպան :

1 . Աշակերտը ի՞նչ բանի կը փափաքի , բայց ի՞նչ  
կ'ընէ : — 2 . Ընթրիքէն ետք ի՞նչ կ'ընէր Յարութիւն :  
— 3 . Ի՞նչ ընելու էր : — 4 . Փափաքով թէ գործով :

Բացատրել առածը . — Ամէն ժամուն յարմար զբա-  
ղում գտնելու է սեղանի վրայ առանց խաղալու ճաշե-  
լով , ցերեկը առանց քնանալու կարգալով , եւ անկող-  
նի մէջ իննալու պէս քնանալով :

### 43. ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մկրտիչ դիտեց անձրեւի օր մը թէ իրենց  
նստած խարխուլ (\*) սենեկին տանիքէն կաթիլներ  
ինկան , եւ մայրն աման մը դրաւ կաթկթուքին (\*)  
համար : Կաթկթուքը քանի մը ժամէն լեցուց ա-  
մանը : — Մայրն ըսաւ Մկրտիչին , «Կը տեսնե՞ս թէ  
կաթիլներն ի՞նչ կազմեցին» . «Այո , մայր , պղտիկ  
լիճ (\*) մը , այս ամանին մէջ , պատասխանեց օր-  
դին» : Ասիկա աշխատասէր տղուն հայելին (\*) է , թող  
նայի այս աննշան (\*) կաթիլներուն , լիճին , եւ քիչ  
քիչ հաւաքէ ծանօթութիւններ (\*) : — Մկրտիչ , ըսաւ  
մայրը , դուրս ելնելով , դռան առջև կը տեսնե՞ս սա  
կճեայ (\*) քարը որ փոս մը ունի մէկ կողմը . անձ-  
րեւի կաթկթուքը միշտ մէկ կէտի վրայ իջնելով



յաջողած(\*) է փոսը փորել և այսչափ խորունկ .  
գիտցիր թէ փորուած քարը ամենէն կարծր(\*) քա-  
րերէն մին է : Մկրտիչ այս կաթկթուքին յիշա-  
տակը(\*) և օրինակը պահեց միտքը և այսպէս մի-  
այն յաջողեցաւ յառաջագէմ ըլլալ :

Առած . — Մանկութեան ուսումը քարի վրայ  
փորուած է, ծերութեան ուսումը սառի վրայ :

1. Ի՞նչ կը կազմէ անզօր կաթիլը երբ դիզուի : —
2. Ուսումն ի՞նչպէս կ'ստանայ տղայ մը : —
3. Կճեայ քարի փոսը գիւրա՞ւ կը կազմուի : —
4. Ի՞նչ բանի օրի-  
նակ կը ծառայէ կաթիլին առաջ բերած ոյժը :

Բացաւրել առածը . — Մանկութեան մէջ տակաւ  
ձեռք բերուած ուսումը բազմարժէք է և հաստատ հիմ-  
իմացական շէնքին , մինչ միաքն ուրիշ տարրերով զբա-  
ղելէ ետք իմացական հաճոյքը դժուար կ'ըլլայ գտնել :

---

#### 44. ԾՈՒԼՈՒԹԻՒՆ

Ծոյլ մը ապրելէ զզուած(\*) կ'ըսէր . «Ի՞նչ է  
այս քաշածս, աշխատէ, վաստրկէ, ու կե՛ր . նորէն  
տատէ, քրտնէ ու տուր շահդ ուտեստի . քանի  
մէկ այս նեղութիւնը քաշեմ : — Բարեկամները  
կանչելով ըսաւ . դիս տարէք, թաղեցէք, ես այս  
նեղութեանց ա՛լ չեմ գիմանար : Մէկը կերակուր  
բերելով ըսաւ , կե՛ր , վաղն՝ Աստուած ողորմած(\*)

է և մի մեռնիր : Չեմ ուտեր , բարեկամ , եթէ հիմա կերայ , վաղն ի՞նչ պիտի ուտեմ , չէ՞ որ աշխատելու է նորէն . խնդրեմ զիս տանիլ թաղելու նայեցէք : — Երբ գերեզման կը տանէին , ճամբան պառաւ մը իմանալով ըսաւ , ամուսինս գեռ նոր մեռաւ , երկու շտեմարան հաց մնացեր է մեր տուն , ուսոյ չկայ . ութ տաս տարի կը բաւէ , այս յուսահատ մարդուն մեղք է , մի տանիք թաղելու , Աստուծոյ սիրոյն : Երբ ծոյլին հասկցուցին , ըսաւ , հարցուցէք պառաւին . հացը թըջած է թէ չոր :

Առած . — Մարդ կայ որ մարդէն լաւ է , մարդ կայ որ էշը անկէ լաւ . մարդ կայ որ խօսեցնես՝ քաղցր կը լսես , մարդ կայ որ չխօսեցնես՝ անկէ լաւ է :

1. Ծոյլը չաշխատելու համար ինչե՞ր կրնայ հնարել :  
— 2. Պատմէ՛ իր որոշումը և բարեկամին մարդասիրութիւնը : — 3. Պառաւը ի՞նչ ըսաւ : — 4. Ի՞նչ պատասխան առաւ :

Բացատրել առածը . — Ամէն կարգի մարդոց բաղդատութիւնը ընելով՝ էշին հետ՝ անխօս անասունի հետ և իր նմաններուն հետ :

---

## 45. ԽՈՍՍՄՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ (\*)

Մատթէոս ըսաւ թէ ներքը մնալով խոստում տալէն ետք՝ եթէ չը պահէ , ի՞նչ կ'երնէ խոստու-

մէն : Ուսուցիչը պատմութիւն մը ըրաւ հասկցնելու համար թէ պէտք է մարդ պահէ ամէն տեսակ խոստում, ինչ կարգի մարդոց ալ տայ : — Բարիդի շրջակաները(\*) գողերէ կողոպտուեցաւ(\*) թիւրէն, որ մատնին չ'ուզեց տալ խոստանալով որ 100 ոսկի տայ վերջը մատնիին համար . մատնին 100 ոսկի չէր արժեր : — Թիւրէն որ մը բազմութեան(\*) մէջ կը խօսակցէր . գողերէն մին եկաւ ականջն ի վար փախալով միտքը ձգեց խոստումը : Թիւրէն շուտով 100 ոսկին հանեց տուաւ ու ճամբեց : Երբ գողը աղէկ մը հեռացաւ անանկ որ ալ չէր բռնուեր, Թիւրէն պատմեց ամէն բան ու ըսաւ . «Պէտք էր որ խոստումն յարգէի(\*) , պատուաւոր մարդոց անանկ կը վայելէ :»

Առած . — Խօսքը կարիճին(\*) կէսն է, տուած խօսքը կը կատարէ :

1. Սոստումը ի՞նչ է և պէ՞տք է պահել : — 2. Թիւրէն ի՞նչ եղաւ : — 3. Ի՞նչ ըրաւ : — 4. Ի՞նչ ըսաւ :

Բացատրել առածը . — Խօսքը որուն տրուած ալ ըլլայ, ո՛ւրկէ տրուած ալ ըլլայ, և ի՞նչ առթիւ ալ ըլլայ, պահելու է, ուրանալու չէ, իր արժանապատուութիւնը պահպանելու համար :



## 46. ԳՈՂՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Յովհանն դեռ հինգ տարեկան էր երբ առաջին անգամ հօրը հետ այցելութեան գնաց մէկ երկու բարեկամներու : Երբ դարձան, հայրը հարցուց թէ ի՞նչ տեսաւ հոն : — Յովհանն պատասխանեց. «այն լաւ հագուած աղաքը ի՛նչպէս ուրախ զուարթ կը ջատկէին, կը խաղային . հապա այն բարձր՝ փայլուն տունը որ խոշոր պարտէզ մը ունէր խաղալու, լաւ նուազի ձայն կուգար վերէն, կերակորի անուշ հոտ մըն ալ վարէն, խելքս գլխէս գնաց, մենք ինչո՞ւ ատոնք չունինք, հայրիկ» — « Տղան, ըսաւ հայրը, այն փառաւոր(\*) տան տէրը հիւանդ պառկած է : Եթէ այդ կերակուրները չեփուին՝ մեզի պէս չոր հաց չի կրնար ուտել . և եթէ նուազը չըլլայ՝ ջիղերը(\*) թունդ կ'ելեն(\*) : Որչա՛փ կը փափաքի որ մեզ նման առողջ ըլլայ և ունեցածը կուտար եթէ առողջանար : Ան ալ մեր վրայ կը նախանձի » :

Առած . — Յեց(\*) ոսկերաց՝(\*) սիրտ հոգած(\*) :

1. Ի՛նչ կ'ընէ Յովհանն : —
2. Գո՞հ է իր վիճակէն՞ ուրիշ աղոց քով : —
3. Գո՞հ է իր տունէն ուրիշ տուն այցելելով : —
4. Հայրը գո՞հ է իր վիճակէն, ուտեստէն : —
5. Փառաւոր տան տէրը գո՞հ է իր վիճակէն :
6. Որո՞ւ կը նախանձի :

Բացարեւել առածը . — Որչափ հոգ ընէ մէկը իր  
չունեցածին վրայ , գոհ չի մնար իր ունեցածէն և հի-  
ւանդ՝ վատաոտոյջ կ'ըլլայ :

## 47. ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆ

Յովհանն չը համազուեցաւ(\*) հօրը խրատին ու  
երբ մեծցաւ՝ աշխատեցաւ լաւ գործ մը ճարել ու  
գտաւ , բայց գոհ չմնաց : Կը արտոնջար որ բնա-  
կելու տուն մը շունի , զոր շատ ջանքով ձեռք ձգե-  
լէ ետք գիշերը քունը՝ ցերեկը հանգիստը մոռցաւ  
հաւասարելու իր մէկ գրացիին որուն նստած խա-  
նութն ալ իրենն էր : — Խանութն ալ ունեցաւ ,  
բայց դարձեալ քունը չը տարաւ և սկսաւ մաշիլ՝  
հատնիլ , ու մեռնիլն աւելի լաւ կը սեպէր քան  
թէ տուներ՝ կալուածներ չ'ունենալ : Այս մասին  
ալ փափաքին հասաւ : — Բայց զարմանալի՛ բան .  
ամէն անգամ որ տան՝ խանութի՝ կալուածի պէտքը  
կ'ունենար , կը կարծէր թէ ալ սիրտը պիտի հան-  
գստանար եթէ փափաքին հասնէր , բայց վերջէն  
կը տեսնէր որ տակաւին(\*) դժգոհ է իր վիճակէն  
և այսպէս միշտ կը հալէր կը մաշէր :

Առած . — Դրացիիդ սագը(\*) քեզի խող(\*)  
կ'երեւայ : Հեռուի սուրբը զօրաւոր կ'ըլլայ :

1. Ի՞նչ ըրաւ Յովհան : — 2. Գո՞հ մնա՞ց իր գործէն : — 3. Ե՞րբ ունեցաւ իր տունը : — 4. Խանձը՞ կալո՞ւածները : — 5. Ե՞րբ մարդս գո՞հ է :

Բացասելի առածները . — Ինչ որ անմատչելի է մեզ , բազձալի՞ հաճելի է թէև ինքնին ոչինչ ըլլայ : Գոհութիւնը միայն երջանիկ կ'ընէ մարդը ի՞նչ վիճակի մէջ ալ ըլլայ :

## 48. ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄ


Կարապետ տգէտ տղայ մըն էր որ բան մը չեղած ատեն կայ կ'ըսէր : Մութին՝ տան մէջ տեղ մը չէր երթար կամ անկողին չէր մտնէր պառկելու , կը կարծէր թէ չար ոգիներ<sup>(\*)</sup> ու գեւեր կան որովհետև մամիկը պզտիկուց զինքը վախցունելու համար գեւերու խօսքն ըրեր էր : — Տան մէջ ցերեկը երբ տնեցիները հոն չըլլային՝ մինակ մնալ ու մտնել չէր ուզէր , կը կարծէր թէ մէկը զինք պիտի բռնէ : Գիշեր մը ոտքը բանի մը դպաւ ու ինկաւ , լացաւ՝ ու գետինը փռուեցաւ ըսելով թէ մենէ-աղէկները<sup>(\*)</sup> զինք բռնեցին : — Շատ ուտելէ ետք անհանգիստ քնանալու ատեն այնպէս եկեր է իր մամիկին թէ հոգեգէշները<sup>(\*)</sup> խեղդել կ'ուզեն զինք . Կարապետ ալ հաւատացեր էր անոր ցնդած<sup>(\*)</sup> խօսքերուն ու միշտ պարապ վախերով միտքը պաշարեր էր :



Առած . — Նա մարդ չէ՛ ցաւ է , ասուն չէ՛  
անասուն չէ :

1 . Տգէտ տղան ի՞նչ կ'ըսէ : — 2 . Ի՞նչ կ'ընէ տան  
մէջ : — 3 . Ի՞նչ կը կարծէ : — 4 . Ինչո՞ւ մինակ մնալ  
չուզեր : — 5 . Ինչո՞ւ ինկաւ : — 6 . Մամիկը ի՞նչ ե.  
ղաւ : — 7 . Ինչպէս վախցուց թսունիկը :

Բացատրել առածը . — Այդ կարգի նախապաշա-  
րու մներ մարդը ցաւի եւ մտատանջութեան կ'ենթար-  
կեն , անասնականութեան կը տանին , տակաւ հեռա-  
ցընելով բանականութիւնը եւ ողջ մտութիւնը :



# Է. ԱՆՁՆԱԿԱՆ ՄՈԼՈՒԹԻՒՆՔ

## 49. ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Տանուտէր (\*) Տորք շատ հարուստ էր, [Թաղին քարոզիչն ու եկեղեցականը (\*) գնացին իր առն ազգելու որ աղջկանց վարժարան մը շինել տայ : Տորք հին ու կարկտան հագուստներ ունէր վրան և կ'ընէր շատ աղքատ ճաշ մը : — Երբ ճաշն ըրաւ ու գլանիկը (\*) վառել ուզեց, ծառան լուցքին զարկաւ (\*), զարկաւ, բայց չվառեցաւ, երկրորդ լուցկի մը վառել ուզեց : Տորք այնքան նեղացաւ որ հիւրերուն առջեւ ջախսեց (\*) : — Հիւրերն ապա շած իրարու նայեցան որ այս կժժի մարդը բան մը չկրնար և պիտի չուզէ շինել : — Մեկնելու (\*) վրայ էին, մէյ մըն ալ Տորք հարցուց թէ ինչո՞ւ եկան ինչո՞ւ կ'երթան : Քարոզիչն ամէն բան յայտնեց, Տորք խնդալով ըսաւ, եթէ այսպէս խնայող չըլլամ, չեմ կրնար բարիք ընել. յետոյ խոստացաւ շինել ու շինեց :

1. Տանուտէր Տորք ո՞վ էր և զո՞վ ընդունեց իր առնն : — 2. Ի՞նչպիսի մէկն էր, ի՞նչպէս կը ճաշէր :

կը ծխէր : — 3. Ի՞նչ ըրաւ իր ծառային : — 4. Հիւրերը ի՞նչ ըրին : — 5. Խելացի հարուստը ի՞նչպէս կը հարստանայ և կը գործածէ իր ունեցածը :

Բացատրել առածը . — Անհաւատալի կարծուածները հաւատալի են և անկարելի բաները տեղի կ'ունենան :

## 50. ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Ոստանցի մը շատ հարուստ էր : Ամէնքը կրեստս(\*) դրեր էին անունը : Շատ ազարակ(\*) ու կալուածներ(\*) ունէր : Կ'ըսէին թէ իւզ ու մեղր կը վազէր տունէն ներս և ոսկի ու արծաթ գրպաններէն դուրս : Բայց շատ ազահ էր : — Օր մը երազին մէջ տեսաւ թէ իր բարեկամներուն բազմածախս(\*) հացկերոյթ(\*) մը կուտար և ըրած ծախքին մտածմունքէն վեր ցատկելով արթնցաւ ու ալ քունը չտարաւ և վերջը այս երազին վրայ այնչափ ցաւ իմացաւ որ որոշեց ալ չքնանալ որպէս զի անգամ մըն ալ այդպիսի երազ չտեսնէ : — Բայց կ'ըսեն թէ ազահին գանձը գողցան : Յուսահատութենէն ինքզինք խեղդել ուզեց բայց չուանին ծախք չընելու համար ծովը նետեց ինքզինք :

Առած . — Մարդուս աչքը ափ(\*) մը հող կը կշտացնէ :



1. Շատ հարուստին ի՞նչ կ'ըսեն : — 2. Ոստանցիին ի՞նչ առատութեան մէջ էր : — 3. Ստո՞յգ էր երազը , ի՞նչ որոշեց ապա : — 4. Ի՞նչ կ'ըսեն ագահին համար : — 5. Դեռ ի՞նչ ըրաւ ագահութիւնը ոստանցիին :

Բացատրել առածը . — Յոյց տալով մարդը իր դժգոհութեան մէջ զոր այս աշխարհիկ կեանքին մէջ ոչինչ կը կշտացունէ այլ միայն գերեզմանը ուր հողը ամուրի կը լեցնեն բարեպաշտները . ասկէ է առածին հողը :

## 51. ՍԱԿԱԻԱՊԷՏ ՀԱՅՐԸ

Ձարեհ ամուսնանալով տան-փեսայ (\*) զնաց , հայրը անոր պարգեւեց մեծ ժառանգութիւն (\*) մը ուրկէ ահագին հասոյթ (\*) մը կը գանձէր (\*) բայց նորէն դրամ կը պակսէր : Սը մը , հօրը տունը , ընտանիքով , եկած էր տօնախմբութեան (\*) : — Սեղանի վրայ Ձարեհ հարցուց . « Հայրիկ , ի՞նչպէս այդչափ դրամը դիզեր ես , քանի որ ես քենէ ահագին հարստութիւն ժառանգեցի և այնչափ կ'աշխատիմ , դարձեալ չեմ կրնար ծախսերս հանել : — Հայրը հրաման ըրաւ երկու ժառանգերէն միոյն որ դուրս ելնէ , միւսին ալ որ սեղանին վրայէն գինին վերցնէ ու ջուր լեցնէ գինիի գաւաթներուն մէջ , և սեղանին վրայ վառած երկու մոմերէն մին մարէ : Յետոյ ըսաւ . « Որդեակ , այսպէս , աւերորդ ծախքեր չ'ընելով մարդ կրնայ միշտ լաւ պրիլ : »

Առած. — Վերմակիդ (\*) չափ ոտքդ երկնցուր:

1. Չարեհի վիճակը բացատրէ՛ : - 2. Ո՛ւր և ի՞նչ հարցուց Չարեհ : - 3. Ծառաներէն մին գինին և մոմերէն մին պակսեցնելով ի՞նչ հասկցուց հայրը :

Բացատրել այլաբանական իմաստը ժողովրդական առածին . - Վերմակը կարողութեան և ոտքը՝ մարդու փափաքը մեկնելով :

---

## 52. ՇՈՒԱՅԼՈՒԹԻՒՆ

Չարեհ հօրը խրատը մտիկ չէր ըրած ու կեղծաւոր (\*) ընկերներուն հետ առտուրնէ մինչեւ երեկոյ կերուխումի (\*) ետեւէ էր : Արդէն փոքր հասակէն երբ դպրոց կ'երթար պէտք չեղած առարկաներ (\*) խաղալիքներ և դեռ ինչ որ տեսնէր կը գնէր :—Տեղեր կային ուր քալելով կրնար երթալ , կառքով (\*) կ'երթար : Ամէն պտուղներու երախայրիքը (\*) և ամէն տեսակէն՝ պիտի գտնուէր : Իր հագած զգեստներն ու կօշիկներն դեռ չմաշած և գոյները չթափած կը ձգէր և նոր շինել կուտար առաջին կարգի վարպետներու :— Խաղամուղները (\*) դրամ քաշելու համար այս շռայլէն , իրեն խաղալ և դրամով խաղալ սորվեցուցին : Շուտով վաստակը կերաւ և պարսքի տակ ալ ինկաւ :

Առած . — Այն ձէթը որ տանն հարկաւոր է, մեղք է տալ եկեղեցւոյն :

1. Անհնազանդ տղայ մը ի՞նչ կ'ընէ : — 2. Մանկութեան ի՞նչ բան աւելորդ է : — 3. Երիտասարդի՞ մը համար : — 4. Եւ ի՞նչ սեղանի վրայ : — 5. Զգեստի՞ համար : — 6. Խաղամուկներն ի՞նչ կ'ընեն : — 7. Շուայլին վախճանն ի՞նչ կ'ըլլայ :

Բացաւրել առածը . — Պնդելով որ իրեն ու իր զաւակներուն ապագան կազմող բանը պէտք չէ տալ ու մտխել նոյն իսկ երբ պահանջողը լինի նուիրական անձ մը՝ հաստատութիւն մը, բայց եթէ պարտքն աչք առնելով :

---

### 53. ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹԻՒՆ

Կարապետ շատակեր ու խման (\*) էր : Օր մը փորը լեցուցած գառ մը մինակ նստած կ'ուտէր՝ ճնկելով (\*) գինին ալ վրայէն, երբ յանկարծ ծառաները վար վազեցին խմացներու թէ դբացիին տունը կ'այրի : — Կարապետ ըսաւ, «Մինչեւ որ կրակը մեզի գայ, գառին այս պուտը կը լնցներ» : Քիչ ետքը եկան ըսին թէ իրենց տանիքը կրակ առած է, «Ըսա նայեցէք, սուս չըլլայ» ըսելէ ետք խոհարարին դառնալով «չուտ գլուխէն սա ուղեղը հանէ» ըսաւ Կարապետ : — Երբ դեռ կ'ուտէր և կը փառաբանէր (\*) գինին որ գլուխը բռնած էր,



ծառաները փախան : Մուխը լեցուցած էր տունը  
երբ մեր շատակերը վերջին դաւաթը պարպեց և  
սպի ելաւ դուրս նետուելու , բայց աւանդ , անցքը  
գոցուած էր փլատակներով (\*) որոնց տակ մնաց  
Կարապետ իր խոշոր մարմնով ու կուշտ փորով :

Առած . — Գինիին հարցուցին , աւրածդ շատ  
է թէ շինածդ . ըսաւ՝ շինածս չգիտեմ՝ աւրածս  
համրանք (\*) չունի :

1 . Շատակերը ի՞նչ կ'ընէ : — 2 . Ի՞նչ պատահե-  
ցաւ Կարապետին : — 3 . Պատմէ խօսակցութիւնը՝ Կա-  
րապետին ու ծառաներուն : — 4 . Ե՞րբ փախան ծա-  
ռաները : — 5 . Շատակերը կրցա՞ւ փախչիլ :

Բացատրել առածը . — Որկորուստը դանդաղ կը  
լինի : Արբեցութիւնը՝ խմանը զայրացկոտ , կռուազան ,  
չար , մարդասպան կ'ընէ . կ'աւրէ մարդը եւ երբեք  
չինութիւն մը չունի :

---

## 54. ԳԻՆԵՄՈԼՈՒԹԻՒՆ

Երեկոյեան դէմ փողոցը լիքն (\*) էր անցորդ-  
ներով (\*) որք տուն կը դառնային գործէ : Անոնցմէ  
մէկն ամենուն ծագր (\*) կ'ըլլար , բերանը տեսակ մը  
կը բանար և իր անութներէն (\*) բռնող մարդոց  
կութներով պուշտալով՝ հայհոյելով (\*) և զարնելով  
պատէ պատ կ'իյնար : Գինով մըն էր այդ՝ Բա-

գոս (\*) անուն որուն վաստակն ամբողջ գինեպանն առած էր ձեռքէն՝ խմցընելով : — Տղաքը ճաշի կը սպասէին և հացի դրամը Բագոս տուած էր գինեպանին : Տունը հասնելուն կուի մը փրցուց իրեններուն հետ . տղաքը «հաց» կը պուային . կինը կ'աշխատէր լուեցնել ամուսինը՝ դուռ դրացի չիմանալու համար : — Ներսէս և Պօղոս որ քովի պատուհանէն իմացած էին ամէն ինչ , իրենց ծնողքին դառնալով ըսին թէ որոշած են որ երբ մեծնան՝ բնաւ օղի (\*) չզնեն իրենց բերան , Բագոսի պէս չըլլալու համար :

Առած . — Գինեպան Ձաքէ Ղուր կը խառնէ պակաս կը ծախէ , միասին կը քցէ (ճնկէ) :

1 Փողոցը ո՞վ կ'անցնի : — 2 . Գինով մը ի՞նչպէս կը ճանչցուի : — 3 . Բագոսի վաստակը ո՞վ ասեր էր : — 4 . Ի՞նչ կ'ընէին տղաքը , կինը : — 5 . Դրացի տղաք ի՞նչ ըրին : — 6 . Դուք ի՞նչ կ'ընէիք անոնց տեղ ըլլալիք :

Բացատրել առածովը թէ գինովին ֆիզիքական ու իմացական անկարողութենէն օգտուելով ի՞նչ չարութիւններ կը գործեն գինեպանները եւ առհասարակ անոնց հետ գործ ունեցող մարդիկ :

## 55. ԾԻԱՄՈՒԼՈՒԹԻՒՆ

Թորոս չար տղայ մըն էր , բարի ընկերները անկէ կը փախչէին . Թորոս կարծելով թէ մեծցած

կըլլայ, ծխելու (\*) սկսաւ՝ մեծերուն նայելով :  
Շուտով վարդակարմիր դէմքը սեւնալ սկսաւ,  
բարկացոտ դարձաւ, քունը փախաւ ու հազ ունե-  
ցաւ և ակտորժակը գոցուելով՝ անօթի մնալու  
ստիպուեցաւ : — Օրերով իր մեծերը կը խրատէին  
որ չվարժուի այդ տգեղ և անպիտան սովորու-  
թեան : Բայց նա գործը կ'ընդհատէր (\*) ու ծխել  
կը սկսէր . վարպետը դժգոհ (\*) այս մոլութենէն (\*)  
ճամբայ սուաւ թորոսին : — Անոր օրական ծախ-  
քերը շատցան, դրամ չէր կրնար ճարել և հաս-  
ցունել ծխախոտի : Կոկորդը (\*) կը կակծէր, բայց  
մեծերուն նմանելու խենդ ըլլալով, ամէն նեղու-  
թեան կը համբերէր : Երբեմն հացի դրամ միայն  
կ'ունենար, հաց չէր ուտեր, ծխախոտի կուտար :  
Որչափ թշուառ էր ան :

Առած . — Աստուած սարին նայելով ձիւնը  
կուտայ :

1. Բարի տղոց հետ ապրելու համար ի՞նչ պէտք է  
ըլլալ : — 2. Ի՞նչ սխալ կարծիք ունէր թորոս : — 3.  
Ի՞նչ եղաւ վիճակը : — 4. Մեծերն ի՞նչ ընելու են :  
— 5. Դրամ ունենար, ի՞նչ բանի կը ծախսէր :

Բացառել առածը . — Երբեմն մոլութեանց համե-  
մատ Աստուած կը պատժէ մարդը :



## 56. ԾԻՈՂԻՆ ՎԱԽՃԱՆԸ

Փողոցէն գլխարկը աղտոտ, վրան-գլուխը հին մէկը կ'անցնէր որ ասկէ անկէ ծխախոտ կ'ուզէր : Ամէն մարդ երես կը դարձունէր ու կը նախատէր (\*) : Երբեմն նայելով թէ փողոցին մէջ մարդ չկայ, կը ծռէր ու գեանէն կը ժողվէր վառած գլանիկի ծայրերը և ասոնք վերջէն կը խմէր : — Միհրան ու Բարսեղ տունէն դիտեցին այս մարդուն ըրածը և ուսուցիչին պատմեցին, որ ըսաւ թէ կը ճանչնայ զանի : Թորոսի պէս աղայ մըն էր այս մարդը որ շատ խեղճ եղաւ այս մոլութիւնովը իր ծերութեան օրերուն մէջ : — Հազէն դիշերը չքնանար և չքնացներ ուրիշները : Մինչեւ որ թքնէ՝ աչքերը կը անկուին և կ'արտասուէ՝ կաս-կարմիր կտրած, կարծես պիտի խեղդուի : Մարդ քովը չնստիր՝ սրտի խառնուք շունենալու համար, և մարդ հեար չճաշեր :

Առած . — Մանկութեան դատումը (\*) (աշխատանքը) ծերութեան պաշար է :

1. Ի՞նչ տեսան փողոցին մէջ : — 2. Միհրանի և Բարսեղի ի՞նչ պատասխանեց ուսուցիչը : — 3. Ի՞նչ կը պատահի ծխամոլին : — 4. Ախորժեղի մէ՞կն է ծխամոլը :

Բացատրել առածը . — Մանկութեան յոռի կամ բարի ունակութիւնը կամ սովորոյթը կը դառնայ յոռի կամ բարի պաշար մը ծերութեան օրերուն մէջ :

# Ը. ԸՆԿԵՐԱԿԱՆ ՊԱՐՏԻՔ

## 57. ԿԵՂԾԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Ագռաւը (\*) պանիրի կտոր մը կտուցով բըռնած՝ ծառի մը վրայ թառեր էր : Աղուէսը տեսաւ հեռուէն և պոչը բարտելով (\*) ժպտադէմ (\*) դիմաւորեց ագռաւը և շողոքորթ (\*) լեզուով մը ըսաւ . « Բարեւ , պարոն ագռաւ , այն օրէն որ իմացեր եմ թէ ձայնդ անուշ է և սոխակ՝ դեղձանիկ (\*) ու խայտիա (\*) շատ վար կը մնան քե՛նէ , շիտակը շատ փափաքեցայ տեսնելու և շնորհաւորելու (\*) քեզ և խնդրելու որ բարեհաճիս քիչ մը երգել : — Այս որ լսեց ագռաւն , ինչ ըլլալը չգիտցաւ . իրան գեղաձայն (\*) էր ինք , իրան ամէնքը կը հաւնէին իրեն , ու ինք իր արժէքը (\*) չէր գիտեր , ուստի բերանը բացաւ որ ձայնը ձգէ՝ պանիրը գետին ինկաւ : — Աղուէսը որ ծառին տակը կը սպասէր (\*) լափեց (\*) զայն , և ծաղրելով միամիտ ագռաւը՝ ըսաւ , « շնորհակալ եմ պանիրէդ՝ քան կոպիտ (\*) խուպոտ ձայնէդ » :

Առած . — Ագռաւը գոմէշին (\*) կռնակը կը քթուրատէ (\*) իր փորին համար :

1. Ի՞նչ կ'իմանաք ազտաւով : — 2. Աղուէս՞ով : —  
3. Աղուէսն ինչե՞ր կ'ըսէ : — 4. Միամիտն ի՞նչ կը կարծէ  
ինքզինք և ինչե՞ր կ'ընէ : — 5. Կեղծաւորը երբ նպա-  
տակին հասած էր՝ ի՞նչպէս կը ծաղրէր զո՞հր :

Բացատրել առածը . — Միշտ շահադիտութիւնը կը  
յորդորէ բարեգործութեան , երանի՛ր անոր որ անշահա-  
խնդիր՝ կը բարերարէ :

## 58. ՃՇՄԱՐՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Իշխան մը բանտ երթալով ամէն սենեակները  
կը պարտի, աչքէ կ'անցընէ բոլոր բանտարկեալները(\*)  
և մէկիկ մէկիկ կը հարցաբննէ (\*) թէ ի՞նչ յան-  
ցանքով բանտարկուած են : — Ամէնքը կ'ուրանան(\*)  
իրենց յանցանքը , մէկը վկաները անիրաւ կը հանէ ,  
մէկը դատաւորին (\*) կաշառ (\*) կերած ըլլալը մէջ-  
տեղ կը գնէ , ուրիշ մըն ալ կ'արդարացնէ (\*)  
ինքզինքը : Անոնց մէջէն մէկը միայն շիտակը կը  
խօսի և չպահեր իր գործած ամէն յանցանքը : —  
Իշխանը (\*) ճշմարտախօս (\*) ու անկեղծ մարդը սի-  
բելով կը գլթայ և ճշմարտախօսութիւնը վարձա-  
տրելու համար՝ ձեռքի գաւազանով կը զարնէ  
անոր ու կ'ըսէ . «Ո՛վ անիրաւ մեղաւոր , այս ամէն  
արդար մարդոց մէջ ի՞նչ գործ ունիս . շո՛ւտ դժուրս  
եղիր ասկէ , դուն հոս չես վայլեր (\*)» : Ու կ'ար-  
ձակէ բանտարկեալը :



Առած . — Շիտակ ճամբով գացողը չյողնիր :

1. Աղնիւ ու բարի մեծը ի՞նչ կ'ընէ : — 2. Յանցանքը ո՞վ կ'առնէ իր վրայ : — 3. Ճշմարտախօս ըլլալը անկարելի՞ բան է և ճշմարտախօս չկա՞յ : — 4. Ճշմարտախօսին վարձքը ի՞նչ է :

Բացասելի առածը . — Միշտ ուղղութիւնը յաղթանակող ցոյց տալով :

## 59. ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մարդ մը միշտ սուտ խօսելու գէշ սովորութիւնն ունէր : Գիշեր մը բոլոր ձայնովը կը պոռայ գրացիներուն . «կրակ կայ, կրակ կայ» : Դրացիները սրբը դոյլով (\*), սրբը ջրհանով (\*) և կեռով կը վազեն կուգան և կրակ չգտնելով կ'երթան վերստին (\*) քնանալու (\*) : — Այսպէս քանի մը գիշեր ստախօսին խելքին փչեց «կրակ կայ», պոռալու շարունակ և ամէն մարդ քունը գլուխը վազեց եկամարելու , բայց ամենքն ալ հասկնալով վերջապէս թէ ստախօսի մը կողմէ խաբուած են, անգամ մըն ալ կ'որոշեն չգալու : — Ու եղաւ որ յաջորդ գիշերը՝ իրաւ ալ հրդեհ (\*) մը ծագեցաւ ստախօսին տունէն , կրակը լափեց (\*) լմնցուց բոլոր տնական (\*) գոյքերը , բայց անոր լալագին (\*) վայնասունին վրայ մարդ տեղէն չշարժեցաւ և իր տունը այրելով մոխիր դարձաւ :

Առած.—Սուտը կ'ոտանաւորի, բայց չերթար:

1. Ստախոտութիւնը ի՞նչ է: — 2. Հրդեհի ու այլ նեղ ատեն դրացիները ի՞նչ կ'ընեն: — 4. Ստախօսին միշտ հաւտալ կ'ըլլա՞յ: — 5. Ստախօսին ճշմարիտ խօսքին հաւտացող կ'ըլլա՞յ:

Բացատրել առածը. — Ինչ որ ճշմարտութիւնն չէ, թէեւ առաջին ակնարկով կը կարծես թէ կը յաղթանակէ, սակայն քիչ վերջը իր իրական գոյնը դուրս կուտայ:

## 60. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Մաքրի գիւղի տեսուչը իր աշակերտները Ֆլորիա (\*) տարաւ պտոյտի: Ոստիկանները հսկեցին (\*) որ գուրտէն մէկը չխանգարէ տղոց դրօսանքը: — Աշակերտներէն մին ծառէ մը պտուղ մը փրցուց: Ոստիկան մը տեսնելով ականջէն բռնեց ու տարաւ պահականոց (\*) որ բանտարկէ, բայց տեսուչին աղաչանքին վրայ արձակեց: Պզտիկ գողը զարմացաւ որ մէկ պտուղով ինչպէս զինք բանտարկեցին (\*): — Տեսուչն ըսաւ. « Գողութեան ինչպէս ամէն յանցանքի՝ մեծն ու պզտիկը չըլլար. առանց տիրոջը հրամանին՝ այսօր պտուղ մը գողցողը վաղն ալ անոր (\*) տունէն կարասի (\*) մը կը գողնայ և միւս օրն ալ կրպակէն ապրանք (\*) մը կամ գրք պանէն դրամ: Մարդ իրենը չեղած մէկ աննշան

բանին անդամ երբ դպչի, կառավարութիւնը կը պատժէ այդպիսին :

Առած . — Արդարներուն օրէնք (\*) չկայ հապա յանցաւորներուն :

1. Յլորիայի մէջ ոստիկանները ի՞նչ կ'ընէին : —  
2. Ի՞նչ ըրաւ մէկը տղուն : — 3. Ինչո՞ւ զարմացաւ տղան : — 4. Գողութիւնը չափի՞ մէջ է : — 5. Ե՞րբ կը միջամտէ կառավարութիւնը :

Բացաւրել Ս. խօսք . — Կառավարութեան կամ օրէնքի գոյութիւնը ու խստութիւնը արդարներուն և բարիներուն համար չէ հապա անկարգ անիրաւներուն :

---

## 61. ԳՈՂՈՒԹԻՒՆ

Գող մը վայելուչ(\*) հագուած վաճառականի (\*) մը ետեւէն ինկաւ ու բազմութեան մէջ անցու գարձը (\*) դժուարին տեղ մը նեղը ձգեց, ոսկիէ կոճակները փրցուց ու գրպանեց (\*) : — Վաճառականն իմանալով՝ զմեղին հանեց գրպանէն ու շուտով ականջը կտրեց փրցուց : « Վայ, ականջս, ականջս », պուաց գողը : Վաճառականն ալ . « կոճակներս, կոճակներս », պատասխանեց : « Ահա կոճակներդ », ըսաւ գողը ու հանեց յանձնեց ոսկիէ գողօնը : « Ահա քու ալ ականջդ », պատասխանե-



լով վաճառականն երկնցուց կտրուած ականջին կըր-  
ճիկը (\*) : — Այսպէս գողը կը յանձնէ գողցածը  
բայց չազատուիր , հապա կը բռնուի , կը բանտար-  
կուի , կը պատժուի , որպէսզի դուրսը ազատ պար-  
տելով՝ չկարենայ նորէն գողութիւն ընել , և ար-  
գելել ուրիշը իր արդար վաստակը (\*) վայելել :

Առած . — Գողը իրեն համար տուն չկրնար  
չինել , բայց տուն ունեցողին տունը կը քանդէ :

1. Գողն ի՞նչ ըրաւ վաճառականին : — 2. Վաճա-  
ռականն ի՞նչ ըրաւ : — 3. Ի՞նչ աղաղակեցին կարգաւ :  
— 4. Ի՞նչ ըրին կարգաւ : — 5. Գողօնը ետ տալը կը  
բաւէ՞ : — 6. Ի՞նչ՞ ո՞ւր կը բանտարկուի գողը :

Բացատրել առածը . — Գողը չկրնար վայելել գո-  
ղօնը և դժբաղդ կ'ըլլայ բանտարկուելով , բայց զժ-  
բաղդ կ'ընէ նաեւ ուրիշը ուրկէ կը գողնայ :

---

## 62. ԲՈՒՆ ՅԱՆՅԱԻՈՐԸ

Երբ չարագործ (\*) մը կախաղան (\*) կը հանէին ,  
լինդրեց որ վերջին անգամ մայրը տեսնէ : Մօրն  
աղաչեց հանել լեզուն որ համբուրէ , և համբու-  
րելու տեղ խածաւ վրցուց զայն : — Ներկաները  
հարցուցին պատճառը : Զարագործը պատասխա-  
նեց . « Տղայ էի , գրացիին բոյն-կալէն (\*) հաւկիթ  
մը գողցայ ու տարի տուն : Մայրս , ապրիս ,

տղան, նորէն բեր, ըսաւ, ու այսպէս ամէն օր  
մէյմէկ հատ բերի: Օր մըն ալ հաւը գողցայ որ  
հաւկիթին ետեւէն չերթամ: Մայրս միշտ կը գո-  
վէր զիս: — Ա՛լ վարժուելով շատ մեծ գողութիւն-  
ներ կ'ընէի և բռնել ուղղներն ալ կը սպաննէի:  
Հրդեհի կուտայի կողոպտած տուներս և հրդեհով  
մոխիր կը դառնային խոշոր պալատներ(\*): Եւ  
այս մեղքերը գործեցի մօրս անուշ լեզուով որ  
գովեց զիս, ես ալ կտրեցի որ ալ ծուռ չխրատէ»:  
Կատաւորը մայրը կախեց տղուն տեղ:

Առած. — Լեզուն օձի պէս երկու ճիւղ(\*)  
ունի, մէկէն մարգրիտ(\*) կը թափի, մէկալէն թոյն(\*):

1. Չարագործը ինչ խնդրեց ու ըրաւ: — 2. Ին-  
չո՞ւ: — 3. Պզտիկ չարութիւնը պզտիկ կը մնա՞յ: — 4.  
Լեզուն ինչե՞ր կ'ընէ: — 5. Ո՞վ կախուեցաւ:

Բացաւրել առածը. — Լեզուն վտանգաւոր գործի  
մը ներկայացնելով որուն հետ զգուշութեամբ վարուե-  
լու է:

---

### 63. ՉԱՐ ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսուցիչը ծառ մը ցոյց տալով Գուրգէնին  
ըսաւ. «Փրցուր այս ճիւղը»: Ճիւղը որ բարակ ու  
պզտիկ էր՝ շուտով փրթաւ: Քիչ մը հաստը ցոյց  
տալով ըսաւ: «Սա՛ ալ փրցուր»: Գուրգէն երկու

ձեռքով հազիւ յաջողեցաւ փրցնել : — Աւելի հաստ  
մըն ալ ցոյց արուելով երբ չկրցաւ փրցունել, ուրիշ  
մը օգնեց անոր և միասին փրցուցին : « Տղաքս,  
ըսաւ ուսուցիչը, գէշ սովորութիւններ երբ դեռ  
փոքր են, շուտով պէտք է փրցնել որ երբ մեծ-  
նան անյաղթելի չըլլան, ինչպէս որ հետզհետէ (\*)  
հաստցած այս ճիւղերը դժուար փրդան իրենց  
բունէն : — Եթէ Բարգէնի ծուլութիւնը այսպէս  
մնայ, եթէ Յովնան իր վրան-գլուխը միշտ ազատ  
պահէ այսպէս, և եթէ Խորէն միշտ կռուազան (\*)  
և բարկացող ըլլայ, ի՞նչ կ'ըլլան իրենք՝ երբ մեծ-  
նան կամաց կամաց, և իրենց հետ մեծնայ չար  
բնութիւնը :

Առած . — Կաթին հետ մտեր, հոգւոյն հետ  
պիտի ելնէ :

1. Ուսուցիչն ի՞նչ ըրաւ : — 2. Ի՞նչ ըրաւ Գուրգէն :  
— 3. Գուրգէն և ուրիշ մը : — 4. Ինչո՞ւ : — 5. Ամէն  
մարդ մտութիւններ ունի՞ : — 6. Ի՞նչ կ'ըլլան մեծնալով :

Բացատրել առածը . — Ի ծնէ մտութիւններ շատ  
դժուարաւ (կարծես հոգիին հետ) կրնան փրցուիլ .  
յարատեւ աշխատութիւն կարեւոր է անոնց ազդեցու-  
թեանէն փրկելու համար ենթական :



# Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

## Ա.

Ագահութիւն . Անկուշտ և աչքը ծակ ըլլալը  
 Ագարակ . Տուն՝ պարտէզ՝ գոմ արտերու մէջ  
 Ագռաւ . Սեւ կամ ճերմակ թոչուն մը  
 Ազնիւ . Աղէկ, բարի սիրտով  
 Աժել . Արժէք ունենալ  
 Ալիք . Ջուրեր որ կ'երկնին ծովին մէջ և կը չարժին  
 Ախորժակ . Ուտելու փափաք  
 Ակոս . Պարտէզի կամ արտի մը մէջ արօրին բացած անցքը  
 Ան . Վախ  
 Անագին . Մեծ, շատ մեծդի  
 Աղաղակել . Պոռալ, կանչել  
 Աղաւնի . Ընտանի թռչուն մը, (տճկ. կոյիւրճիկն)  
 Աղբիւս . Աղբանոց, (տճկ. չկօրչիւք)  
 Աղուես . Մորթն ազնիւ և խորամանկ վայրենի կին. դանի մը  
 Անապարող . Եռտ ընող, փութացող  
 Ամպ . Երկնքի վրայ պատած մութ և սեւ շոգի

Այգեպան . Այգիի գործով զբաղող  
 Այցեգին . Բժիշկին լճարուելու համար որոշուած գին  
 Այցելել . Տեսնելու երթալ  
 Անդարման Առանց դարմանի, անգեղ  
 Անթիւ . Թի՛ն՝ համրանք չունեցող, շատ  
 Անխնամ . Խնամքի կարօտ  
 Անխռով . Առանց տակն ու վրայ ըլլալու  
 Անկեալ . Ինկած  
 Անկեղանոց . Խեղճ, ոյժէինկած ծերերու անդ՝ տուն  
 Անկեղծութիւն . Կեղծիք՝ ստութիւն չունենալը  
 Անհամբեր . Չհամբերող  
 Աննուան . Արժէք չունեցող, ոչինչ [գոթուք]  
 Անուք . Թեւին տակը (տճկ.  
 Անոք . Մարդ, տէր-աիրական չունեցող  
 Անտառ . Անպտուղ ծառերու աճագին պարտէզ  
 Անտրտուց . Առանց գանգատելու, առանց խօսք ընելու  
 Անցորդ . Անցնող ճամբորդ  
 Անցուդարձ . Անցնիլ դառնալը

Անհաղափար . Անկիրթ  
 Ապակի . Հոյսը չարգելող  
 նիւթ մը (տճկ. ճամ)  
 Ապսպրել . Հսեւ , պատ-  
 ուիրել  
 Ապրանք . Ծախելու բաներ  
 Առանձին . Մինակ , միայ-  
 նակ  
 Առաջնորդ . Եկեղեցիին մե-  
 ծը , եպիսկոպոս , վար-  
 դապետ  
 Առասաղ . Սենեակին վի-  
 բրի մասը (տճկ. քալան)  
 Առարկայ . Ամէն բան որ  
 մեր աչքը կը տեսնէ  
 Ասուն . Հսող , խօսող  
 Ասուած ողորմած է . Ան-  
 շուշտ Աստուած կ'ողորմի  
 Ասուածային . Աստուծոյ  
 յատուկ  
 Արդարասեք . Երտակ մարդ-  
 ուղղութիւնը՝ իրաւուն-  
 քը սիրող  
 Արդարացնել . Իրաւունքը  
 ինքնիրեն տալ , արդար՝  
 անմեղ հանելու  
 Արդի . Հիմակուան  
 Արժանաւորաց . Արժէք ,  
 պատիւ ունեցողներուն  
 Արժեք . Գին [դուրս ընել  
 Արձակել . Զգել , հանել ,  
 Արօս . Պզտիկ թռչուն մը  
 որ ջուրի մէջ կը լողայ  
 (Վանայ կողմերը)  
 Աւարտել . Լմնցնել  
 Աւացի . Ոտքով (զարնող)  
 (տճկ. քեֆուե)  
 Ակոր . Աքաղաղ (արու հաւ)

Բ.

Բագոս . Խմողներուն Աստ-  
 ուածը  
 Բազմածախս . Ծախք շատ  
 ընող  
 Բազմութիւն . Ծատ մարդիկ,  
 շատեր  
 Բաղնեպան . Տաք-տունի՝  
 բաղնիքի տէր , վարպետը  
 Բամբասել . Գէշ խօսիլ  
 Բան-քող . Աշխատանքէ  
 դադարում , հանգիստ  
 միջոց , գործադուլ  
 Բանձարկել . Բանաբ նետել  
 Բաշխել . Յրուել , նուիրել ,  
 ամենուն ապլ  
 Բառաջել . (Եղին , գոմէշին)  
 ձայն հանելը  
 Բարեհաճիլ . Ծնորհք՝ պա-  
 տիւ ընել , զիջանիլ :  
 Բարեսիրտ . Սիրաբ բարի  
 Բարտել . Երեբցընել , շար-  
 ժել  
 Բարտի . Երկար հասակով  
 ծառ մը  
 Բիծ . Կեղտ , աղտ  
 Բնական . Ծնած օրէն , ծը-  
 նունդէն , բնականէն  
 Բնակիլ . Տատ մէջ մնալ ,  
 նստիլ , ելլել  
 Բնութիւն . Այն ամէն բա-  
 ները որ մեր շարս կողմը  
 կան , մեր վարուելու  
 կերպը  
 Բոյն . Թռչնոց տուն  
 Բոյն դնել . Տեղաւորուիլ  
 Բոյն—կալ . Հաւին ածելու

տեղը և այն հաւելիթ-  
նեքը որոնց վրայ կը նստի  
ածելու համար

Բորոս . Մորթին վրայ վէր-  
քեր ունեցող

Բուն . Ծառին այն մասը  
որ հողին ու ճիւղերուն  
մէջտեղն է :

Բրդուն . Կտոր , պատառ

Բոցայ . Մուրացիկ

Գ .

Գանձել . քաղել , շահ առ-  
նել

Գեղաձայն . Գեղեցիկ ձայն  
ունեցող

Գրառուս . Գուժը՝ սէրը  
շատ

Գրութեան տուն . Այն տեղը՝  
տունը ուր գլխաւոր կը  
խնամեն խեղճերը , հի-  
ւանդանոց

Գրութիւն . Գուժ , սէր

Գինեմոլութիւն . Գինի շատ  
խմելու սովորութիւնը

Գինեպան . Գինի ծախող

Գինի . Տեսակ մը խմելիք,  
որ մարդը կը գինովցնէ .  
կը հանուի խաղողէն

Գլանիկ . Փաթթուած ծը-  
խախտ՝ խմելու համար  
(սիկար)

Գոհար . Մեծ գին ունեցող  
արժէքաւոր քար մը

Գոհարավանառ . Գոհար  
ծախող

Գոհունակութիւն . Միրտը  
գոհ և ուրախ ըլլալը ,  
չնորհակալութիւն

Գողօն . Գողցուած բան

Գով . Ախոռ ուր եզն ու գո-  
մէշը կը կատուին

Գորգ . Բրդոտ փուոցք (տճկ-  
խաշի)

Գործարան . Մարմնոյն այն  
մասերը որ մէյմէկ գործ  
կը տեսնեն

Գուլ . Բուժ՝ չկտրող սուր  
չեղող [առնել

Գրպանել . Գրպանը դնել՝

Դ .

Դաւոս . Հարթ , դուրան  
տեղ , արտ (տճկ . օլխ)

Դառն . Լեղի՝ անհամ

Դասընկեր . Դասարանի մէջ  
ընկեր

Դասաւոր . Դատ տեսնող՝  
կտրող

Դասել . Աշխատիլ , դատ  
տեսնել

Դարման . Դեղ , հիւանդին  
տրուելիք բան , կենդա-  
նիի ուտեստ :

Դեղձանիկ . Թռչուն որ ա-  
նուշ կ'երգէ (տճկ . գա-  
նարեա)

Դեւ . Մատանայ , անմար-  
մին չար ոգի

Դժգոհ . Գոհ չեղող , ուրախ  
չեղող

Դժգոհութիւն . Գոհ չըլլա-  
լու կերպը



Դժուարել . Զուգել , սիրար  
 նեղանալ , գժուարը պալ  
 Դիմաւորել . Առաջն ելնել  
 Դողահար . Դողի մէջ սար-  
 սըռացող , գողացող , ջեր-  
 մէ բռնուած  
 Դոյլ . Զուր քաշելու աման  
 (տճկ . զօլա) [ցիները  
 Դուռ-դրացի . Բովի դրա-

Զգուիլ . Դանիլ , չսիրել  
 Զի . Որովհետեւ , քանի որ  
 Զուարթ . Ծիծաղերես  
 Զսպող . Բռնող՝ կապող՝  
 ճնշող  
 Զրպարտութիւն . Մէկուն  
 վրայ սուտ բան յանցանք  
 բռնցունելը  
 Զօրաւոր . Ուժով

Ե.

Եգերֆ . Ծայր , ճոթ , ափ  
 (ծովի)  
 Եկեղեցական . Բանկալա-  
 պետ , թաղական , ե-  
 կեղեցիին աշխարհական  
 պաշտօնեան  
 Ել . Իւզ  
 Ելիքն . Բրինձով , ձաւա-  
 րով (պուշկուր) եփուած  
 կերակուր մը (տճկ . փի-  
 շաւ [սիրող  
 Եսասեր . Մինակ ինքզինքը  
 Եսասիրութիւն . Մինակ  
 ինքզինք սիրող ըլլալ  
 Երախայրիֆ . Առաջին ան-  
 դամ եղած պտուղը  
 Երկիւղած . Աստուածալախ  
 Երկրագործ . Հողը մշակող  
 արհեստաւոր

Ել . Այլ ոք , ուրիշը :

Է.

Ը.

Ընդհատել . Կիսատ՝ թերի  
 ձգել  
 Ընդունել . Առնել  
 Ընդօրինակել . Օրինակը  
 հանել  
 Ընթրիֆ . Երեկոյեան ճաշ  
 Ընծայ . Նուէր  
 Ընհանիֆ . Տնեցիները , կիսն  
 ու զաւակները

Թ.

Թալլուիլ . Կողոպտուիլ  
 Թաղական Գիւղին՝ թա-  
 դին մեծերը , իշխանները  
 Թապալել . Նետել , ձգել  
 Թշուառ . Խեղճ  
 Թոքով . Թ . Դ . Տ . գիրերը  
 գժուար ճնշող  
 Թոյն . Դեղ մը որով կը  
 մեռցընեն

Զ.

Զարդարել . Շակել , յար-  
 դարել  
 Զբօսնուլ . Ժամանակ ան-  
 ցընել , խաղալ

Թոռակ . Աշակերտին տա-  
լիք վարձքը

Թուխս . Չափ հանելու հա-  
մար հաւին հակիթնե-  
րուն վրայ նստիլը

Թունդ ելնել . Տակնուզրայ  
ըլլալ գրգռուիլ

Թռչկոնել . Թռչալիլ , թռիլ

ժ .

Ժառանգութիւն . Հօրմէ  
զաւակաց ինկած բաժին,  
հարստութիւն

Ժխոր . Աղմուկ

Ժպտադեմ . Խնդում երե-  
ստիլ , ուրախ

Ի .

Իմասուն . Խելացի

Ինչուան . Մինչև որ [ոյժ

Իսխանութիւն . Մեծութիւն,  
Իսկոյն . Շուտով

Իրարանցում . Տակնուզրայ  
ըլլալ իրար անցնիլ

Իրաունք . Գործք մ'ընե-  
լու՝ ման մը վայելելու ոյժ

Prof . Շիտակ

Լ .

Լալագիւն . Լալով

Լափել . Ուտել , կլլել , հաս-  
ցընել

Լաճոնդեան . Ֆրանսացի ա-  
ռակախօս մը

Լին . Ձուրի մեծ կոյտ  
Լխկել . Հասիլ , որթնտաիլ ,  
Փտտիլ

Լոկ . Մինակ , սոսկ  
Լուր ունենալ . Գիտնալ ,  
իմանալ

Լուցկի . Գիւրաւ բանկոյ  
վառելու նիւթ մը (աճկ-  
ֆիքրիք)

Խ .

Խաղամոլ . Խաղ շատ սիրող  
Խայտիս . Լաւ երգող թըռ-  
չուն մը (աճկ . իսքիւնոյ)

Խարխուլ . Փլելու մօտ ,  
փլփլած

Խլել . Քաշել առնել  
Խման . Օղի՝ գինի շատ  
խմող

Խնայողութիւն . Ունեցածէն  
պակաս ծախսել

Խնդում . Ուրախութիւն

Խնլոս . Քիթը վազող  
Խոզ . Ընաանի կենդանի մը  
ազտոտ խոսպոտ (աճկ . 30-  
մուզ)

Խոլոր մոլոր . Ծուռ ու մուռ  
Խոհանոց . Կերակուր եփե-  
լու տեղ

Խոհարար . Կերակուր եփող  
Խոսանալ . Խօսք տալ

Խոսմնապահութիւն . Խօս-  
քը՝ խոտտումը բռնել

Խորսուբոս . Ծամբայ մը որ  
քարոտ ելեւէջով՝ եւ  
գժուարին է [նեցող

Խոց . Ուտեցք ե վերք ու-

Խռփոս . Աւրուած , խոս-  
լով ելած ձայն  
խսիւ . Ծանր կերպով

Ծ.

Ծաղկազարդ . ծաղիկնե-  
րով զարդարուած՝ շրտ-  
կուած

Ծաղր ըլլալ . ուրիշին խա-  
ղալիք և ծիծաղելի ըլլալ

Ծանօթութիւն . բանի մը  
մասին լուր ունենալ

Ծխամոլութիւն . ծխախոտ  
գործածելու չափազանց  
սէր :

Ծխել . ծխախոտ գործածել  
Ծննդեան օր . Քրիստոսի  
ծնած օրուան հանդէսը

Ծուխ . մուխ (տճ. ճիւղան)

Ծրարուիլ . փաթթուիլ

Կ.

Կարկրուք . կաթիլներու  
իյնալը՝ վազելը

Կալուած . հողային հարս-  
տութիւն

Կախաղան . մարդ կախե-  
լու գործիք

Կանօն . կարգ , օրէնք ,  
ուղղութիւն

Կաղանդել . Նոր տարիի օրը  
իրարու նուէր ընել

Կամապատ . խօսքը՝ կամքը  
առաջ տանող

Կարապի . տան մը կահերը

Կառք . ձիու սայլ (արապա)

Կարապ . ջուրին մէջ լողա-  
լու ախորժող թռչուն մը

Կարծր . պինդ , ամուր

Կարողութիւն . ոյժ

Կեղծ . սուտ , այն որ ճշ-  
մարտին նմանը չէ

Կեղծաւոր . իր ինչ ըլլալը  
ծածկող շողոքորթ

Կեռ . ծայրը ծուռ ու շեղ  
գործիք մը , բան մը  
բռնելու (շէնկեղ)

Կերուխում . ուտել-խմել ,  
հացկերոյթ

Կիսովի . կէս մը , կէս առ  
կէս

Կիրք . բարկութիւն

Կծծի . ազահ , պէտք եղած  
ծախքը շքող

Կնեայ . մարմարէ (քար)

Կոկորդ . գլխոյն և մարմ-  
նոյն մէջ տեղի մասը .  
վիզին ներսը

Կողոպտել . մերկացնել ,  
թալնել

Կողոպտուիլ . թալնուիլ եւ  
սոթտուիլ

Կոպտութիւն . անկրթու-  
թիւն , բրտութիւն

Կոպիտ . կոշտ , անկրթ

Կուրօրէն . կոյրի պէս

Կուուազան . կոուող , կռիւը  
սիրող

Կսկիծ . ցաւ

Կսուց . թռչունին բերանը

Կտրիւն . զօրաւոր , քաջ

Կրակարան . կրակի աման,  
վառելու տեղ

Կրեստ . հարուստ իշխան մը



Կրթասիրութիւն . դպրոցը՝  
կրթութիւնը , ուսումը  
սիրել  
Կրնիկ . մարմնոյն այն մասը  
որ միտէ կարծր է՝ օսկորէ  
ալ կակուղ  
Կրպակ . խանութ

Լ.

Հագիւ . դժուարաւ  
Համարձակութիւն . անվա-  
խութիւն  
Համբարձման օտն . Գրիս-  
տոսի երկինք ելնելուն  
հանդէսը  
Համեղ . համով, հոտը տեղը  
Համոզուիլ . իրաւունք տալ  
Համբանք . թիւ , հաշիւ  
Հայելի . տեսակ մը ապա-  
կի որուն մէջ դիմացը  
եղածին պատկերը կ'ե-  
րելի  
Հայհոյել . ուրիշին գէշ խօսք  
ըսել  
Հանգանակել . ասկէ անկէ  
հաւաքել  
Հանգստակէս . հանգիստ ,  
հանգարա  
Հասարակաց . ամենուն  
Հասկ . ցանքը որ բուսած  
է և կը քաղուի  
Հասոյք . հարստութենէ կամ  
տեղէ մը բան մը ձեռք  
անցնել . եկամուտ  
Հասուցանել . տալ  
Հարկ . խնջոյք , հացկե-  
րոյթ , ճաշ

Հարցախնդիր . հարցունել ,  
քննել  
Հացկերոյք . սեղան տալ ,  
ճաշ տալ  
Հաւասք . բանի մը վրայ  
վստահութիւն  
Հեղութիւն . խելօք՝ կակուղ  
ըլլալ  
Հետեւցրնել . հանել , ըսել  
ուզել  
Հետզհետէ . քիչ քիչ , իրա-  
րու ետեւէ  
Հելալ . սիրտն ելնելով  
շունչ առնել  
Հնազանդութիւն . ուրիշին  
ըսածին պէս ըլլալը՝ ընելը  
Հնչել . գիրին ձայնը հանել  
Հոգած . մտմտացող , հա-  
լող մաշող  
Հոգեգե . գիշերուան չար  
դել (տճ. խօրթոյսք)

Հով . քամի  
Հովանի . շուք  
Հպասակ . հրամանը կա-  
տարող  
Հսկել . նայիլ , զգուշու-  
թիւն ընել  
Հրդեհ . տան կրակուիլը  
Հրմեքիկել . հրել մշտել ,  
քաշել , քաշքշել

Ձ.

Ձանձոյք . սրանեղութիւն  
Ձեռագործ . ձեռքի աշխա-  
տանք  
Ձուակեղ . իւղով եփուած  
հաւկիթ

Ճ.

Ճգնաւոր . վանքին՝ անա-  
պատներուն մէջ քաշ-  
ուած՝ աղօթող մարդ  
Ճիւղ . ծառին թեւերը  
Ճնկել . խմել , արրինալ  
Ճգապահութիւն . ամէն  
բան ժամանակին ընելը  
Ճեմարսախօս . շխաակ խօ-  
սող  
Ճպուռ . միջատ մը որ ճրռ-  
ճրռ ձայն կը հանէ  
Ճունչել . դրան ձայնը հանել  
Ճրագ . լոյս տուող գործի՝  
նիւթ  
Ճօնել . երերալ , կաղալ ,  
չարժիլ

Մ.

Մանաւանդ . Աւելի  
Ման գալ . Պարտել  
Մանել . Բուրդը թել ընել  
Մանկլաւիկ . Թագաւորի  
ծառայ  
Մանկութիւն . Տղայութիւն  
Մօսիւն . Վրայօք (բանի մը)  
Մասնել . Ձեռք տալ , ի-  
մացնել  
Մարագ . Յարդանոց , չոր  
մարգ և խոտ լեցնելու  
ամբար  
Մարգրիտ . Տեսակ մը ար-  
ժէքաւոր քար :  
Մարդավարութիւն . Շնորհ-  
քով ապրիլ [իյնալ  
Մեկնիլ . Երթալ , ձամբայ

Մեղր . Մեղունիքուն պատ-  
րաստած անուշ ուտելիքը  
Մենե-աղեկ . Միտքով հը-  
նարուած դեւ  
Մերկ . Որ զգեստ չունի ,  
որուն միտք կ'երեւի  
Մլաձայնութեամբ . Ամէնը  
մէկտեղ  
Մլամիս . Սարուող , խել-  
քը կարճ  
Միջոց . Ատեն , ժամանակ,  
պայման , ժամ  
Մնջիկ (լուիկ) . Առանց ձայնի  
Մոլութիւն . Գէշ բանի մը  
մէջ միշտ ըլլալը :  
Մորթ . Մարմնոյն վրայի  
կեղեւը  
Մռիլ . Սօսքը բռնել , հը-  
նազանդիլ  
Մրջիւն . Փոքրիկ միջատ  
մը որ գեանին տակ կ'ապ-  
րի (բազմութեամբ) (տճկ-  
գարնճա)

Յ.

Յայտնի լինիլ . Երեւիլ  
Յանկարծ . Մէկէն ի մէկ  
Յաջողիլ . Կարենալ  
Յաջորդ . Ետեւէն գալ  
Յասակ . Տակ , ներքեւ  
Յարգանք . Պատիւ [բռնել  
Յարգել . Պատուել , խօսքը  
Յիշատակ . Մտքի մէջ բանի  
մը վրայ տեղեկութիւն  
Յիշել . Միտքը բերել  
Յոպոպ . Թռչուն մը , (տճկ-  
բուրու)

Յոռի . Գէշ , չար  
Յուսահաս . Յոյսը կտրած  
Յօրինուած . Շինուած , շէնք

Ն

Նախ . Առաջ  
Նախանձիլ . Մէկուն ունե-  
ցածին փափաքիլ  
Նախապաշարում . Մտքի  
մէջ պարապկարծիք՝ վախ  
Նախասեյ . Վար զարնել ,  
գէշ խօսել  
Նախարար . Կառավարու-  
թեան մեծ մարդ , պաշ-  
տօնեայ  
Նաւ . Ծովու վրայ գնա-  
ցող շէնք  
Նիհար . Տկար , ոսկորն ու  
կաշին մնայած (տճկ.  
զաիժ)  
Նիւ . Տղոց գովեստի հա-  
մար թիւ  
Նկար . Ձեռքով գծուած  
պատկեր  
Նմանիլ . Հետեւիլ , մէկու  
մը պէս ըլլալ  
Նոնի . Տեսակ մը ծառ (տճկ.  
սեղի)  
Նոյնպէս . Անանկ  
Նուագ . Գործիք մը որով  
կ'երգուի

Շ

Շարունակ . Միշտ  
Շեկեմ-ճնորհի . Կանոնաւոր,  
յարգի

Շիլ . Աչքը՝ նայուածքը ծուռ  
Շնորհաւորել . Մէկուն լա-  
բան մը ունենալուն ու-  
րախութիւն յայտնել  
Շնորհի . Իրաւունք չեղած  
բան մը վայելել , Աս-  
տուծոյ մեզ ձրի զրկած  
պարգևը  
Շոգիանալ . Տաքնալով ջու-  
րը ցնդել , օդին մէջ ել-  
նել , պակսել  
Շողոփօրք . Գովեստ ընող  
այնպիսի մէկուն որ չար-  
մեր  
Շուրջ . Բոլորաիքը  
Շուայլ . Շատ ծախսող  
Շրջակայ . Չորս կողմը  
Շրջուն . Ոտքի վրայ պտտող

Ո

Ոգի . Միտքով շինուած  
մարդ , սուտ զօրութիւն ,  
սատանայ  
Ոսկերաց . Ոսկորներուն  
Ոսպ . Աչքի մէջի կոր սեւը  
Ոսան . Վանի մօտ քա-  
ղաք մը  
Ոսանաւորել . Ոանւորիլ , ոտ-  
քի ելնել , քալել սկսիլ  
Որք . Հայր կամ մայր չու-  
նեցող  
Որդեալ . Տղա՛ս , զաւակս  
Որկրամոլութիւն . Շատ ու-  
տելու սովորութիւն  
Որջանալ . Կենդանիին՝ ա-  
նասունին իր բոյնը քաշ-  
ուիլը



Ուղղութիւն . Շիտակ ճամ-  
բայ, շտկուիլը  
Ուղղութի . Շտկուիլ , խե-  
լօքնալ  
Ունակութիւն . Սովորու-  
թիւն , վարժութիւն  
Ուրանալ . Ըսել թէ չգիտէ  
Ուրկանոց . Տեղ կամ պա-  
տըսպարան՝ ուր բորոտ-  
ները կը դարմանուին :

Չ

Չախ . Չեխ, յանդիմանանք  
Չարագործ . Չար գործեր  
ընող  
Չարչարել . Նեղել  
Չփաւոր . Կարօտ աղքատ

Պ

Պալատ . Մեծ տուն , խո-  
շոր տուն մը  
Պահականոց . Ոստիկան-  
ներուն տեղ  
Պաղատիլ . Շատ աղաչել  
Պանունապատանք . Տղոց  
խաղալիք՝ մարդու կեր-  
պարանօք  
Պայուսակ . տոպրակ , պըզ-  
տիկ պարկ  
Պաշար . պատրաստուած  
պիտոյք  
Պաշարել . լեցունել, զբա-  
ղեցնել (միտքը)  
Պաշտել . սիրել , յարգել ,  
երկրպագել [գործ  
Պաշտօն . ծառայութիւն ,

Պատանք . ննջեցեալը փաթ-  
թելու ճերմակ լաթ  
Պատարագ . Ս . Հաղորդու-  
թեան պատրաստութեան  
համար հանդէս  
Պատնառալ . համար, երեսնէն  
Պատրիարք . եկեղեցիին մեծը  
Պատրուակ . շիտակը չըսե-  
լու համար հնարուած  
սուտ մը (տճ . նահանա)  
Պարգեւել . տալ , նուիրել  
Պարել . առասպելներու  
մէջ յիշուած կիներ (քերի)  
Պարոն . աղս, եֆեկնի  
Պատրականութիւն . աշա-  
կերաին դասը պատրաս-  
տելու համար տրուած  
պարտք  
Պատրք . մեր ընելիք բանը՝  
այն բանը որ՝ ուրիշները  
կ'ուզեն որ ընենք  
Պնդել . ուժով ըսել, ստիպել  
Պոս . կաթիլ մը ջուր, դա-  
ռին ազդբը

Ջ

Ջերմ . հիւանդութիւն մը  
որ մէկ մը կը տաքցունէ  
մէկ մը կը մսեցնէ  
Ջիղ . միսի մէջ հիւսուածք

Ս

Սասի . պարսիկ բանաս-  
տեղծ մը կիւրճաբանի  
գիրքը գրող [(տճ . գագ)  
Սագ . ընտանի թռչուն մը

Սալ . տափակ քար  
 Սակաւապէտ . քիչ բանով  
 ապրիլ ուղող  
 Սանել . (ոտքը) չբռնել  
 Սասիկ . շատ խիտ  
 Սար . փոքրիկ լեռ , բլուր  
 Սարսել . տակն ու վրայընել  
 Սաւան . անկողնի մէջ փրո-  
 ուած ձերմակ կտաւ  
 Սոխակ . գաղցր երգող  
 թոչուն մը  
 Սոված . անօթի  
 Սուրբ գիրք . եկեղեցւոյ մէջ  
 կարդացուած Աստուծոյ  
 գիրքը  
 Սպասաւոր . ծառայ մը որ  
 տան մէջ կ'աշխատի  
 Սպասել . կենալ բանի մը  
 համար  
 Սսամոս . կերակուրը մար-  
 տելու տեղ՝ կամ գոր-  
 ծարան  
 Ստեղծուած . այն ամէն բա-  
 ները որ կան մեր շորս զին  
 Ստիպել . նեղել  
 Սրահ . մեծ սենեակ

Վ

Վախճան . վերջ  
 Վանառական . մեծ գոր-  
 ծերու վրայ առեւտուր  
 ընող  
 Վայելուչ . շէնք-շնորհք ,  
 լաւ  
 Վայելել . յարմարիլ  
 Վայնասուն . աղաղակ կան-  
 չոր ըռաուք

Վաստակ . շահ  
 Վասնել . պարապ բանի  
 ծախսել  
 Վարագոյր . բան մը ծած-  
 կելու համար դրուած  
 փողք  
 Վարդակարմիր . վարդի  
 պէս կարմիր  
 Վարձատրել . վարձքի փո-  
 խարէն տալ  
 Վերմակ . գիշերը վրայ  
 առնելիք բան , քունի  
 համար  
 Վերստին . նորէն , դարձեալ  
 Վեհ . խօսքով կռիւ  
 Վկայ . գործ մը հաստա-  
 տելու համար բան մը  
 ըսող մէկը  
 Վեսանայ . ցաւիլ , նեղանալ  
 Վուվու . աղաւնի թոչու-  
 նին ձայնը  
 Վիրաւորուիլ . զարնուելով  
 վէրք առնել

S

Տակաւիկ . դեռ  
 Տանիք . տան ծածքը , երդիք  
 Տանուսեր . մեծ տուն , շատ  
 հողեր ունեցող  
 Տասանել . երթալ , գալ ,  
 շարժել  
 Տասիլ . աշխատիլ  
 Տարեց . տարիքոտ , հասակն  
 առած մեծ  
 Տերեւ . ծառին կամ բոյսին  
 վրայ ելած խոտ (տնկ .  
 քափրափ)

Տժգոյն . (դէմքին) գոյնը  
 փոխած  
 Տխուր . Մտածկոտ , չլըն-  
 դացող  
 Տիկ . Կենդանիի մորթ ա-  
 սանց ճեղքելու հանուած  
 (թուլում)  
 Տմարդութիւն . Անշնորհք  
 բան , անկրթութիւն  
 Տնական . Տան յատուկ  
 Տուն-փեսայ . Երիտասարդ  
 մը որ կնկանը տունը կը  
 բնակի  
 Տօնախմբութիւն . Մէկուն  
 անունին տարին անգամ  
 մը եկեղեցւոյն մէջ յիշ-  
 ուելու հանդէսը :

Ց

Յեխ . Տրդմ (տճկ. չամուր)  
 Յեց . Ուտիճ որդ որ կը  
 կրծէ կը հատցնէ  
 Յնդած . Ծեր մը որ մէյ մը  
 լաւ կը մտածէ կը խօսի  
 մէյմն ալ ոչ  
 Յուիք . Տանիքին ծայրը  
 (տճկ. սաչափ)

Փ

Փառաբանել . Գովել  
 Փառաւոր . Փայլուն՝ աղէկ  
 Փառք . Մեծութիւն , փայլ  
 Փեքեզակ . Ուքի վրայ բա-  
 ներ ծախող (տճկ. չերչի)  
 Փլտակ . Եէնքի մը աւե-  
 րակները՝ փլածը

Փիլիսոփայ . Խելացի , ի-  
 մաստուն  
 Փոքորիկ . Ծովին ջուրե-  
 բուն ելնելը (ծովին սաստ-  
 կութիւնը)  
 Փոխադրել . Տեղէ մը ուրիշ  
 տեղ տանիլ՝ կրել  
 Փոխանակ . Տեղ (ըլլալ) :  
 Փոփ . Մանր հող  
 Փուն . Պարապ  
 Փուռ . Հաց եփելու հնոց  
 Փռեզսալ . Եունչն ստնելու  
 ատեն նեղուելով ձայն  
 հանել (տճկ. անարմափ)

Ք

Քաղցրութեամբ . Անուշ  
 կերպով  
 Քանկել . Աւրել  
 Քաջալեբութիւն . Սիրտ տալ  
 Քարիւղ . Իւղ մը որ կը  
 վառի (տճկ. կաղ)  
 Քարոզիչ . Քրիստոսի պատ-  
 ուէրները բացատրող  
 Քերձե . Որսի շուն [րել  
 Քրուրսիլ . Ոչիլները մաք-  
 Քսութիւն . Իրարու խօսք  
 տանել բերելու գէշ ու-  
 նակութիւն

Օ

Օդ . Այն բանը զոր կը շըն-  
 չենք, ներս կ'առնենք ու  
 կուտանք դուրս  
 Օղի . — Խմելիք մը որ կը  
 դինովցնէ



Օրերով . Շատ օրեր  
Օրեց . Կարգ կանոն  
Օրիորդ . Աղջիկ  
Օրհնել . Աստուծոյ շնորհքը  
տալ , Կանչել , աղօթել

Ֆ

Ֆլորիա . Քիւչիւք չէքմէ-  
ճէլ մօտ ծաղկաւէտ պար-  
տէզ մը :





# ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ



## Ա. — Կրօնական պարտիք

1. Բնութեան մեծութիւնը . . . . .	11
2. Բնութեան գեղեցկութիւնը . . . . .	12
3. Բնութեան իմաստուն յորինուածքը . . . . .	13
4. Աստուածային կարողութիւն . . . . .	15
5. Աստուածային պաշտօն . . . . .	16
6. «Ի՞նչպէս աղօթեմ» . . . . .	17
7. Երկիւղած տղան . . . . .	18
8. Աստուծոյ վախը . . . . .	19

## Բ. — Հանրային պարտիք

9. Բարի և չար . . . . .	21
10. Բարի Ղեւոնդը . . . . .	22
11. Չարերը . . . . .	23
12. Պարտք և իրաւունք . . . . .	24
13. Անձնուիրութիւն . . . . .	25
14. Եսասիրութիւն . . . . .	26
15. Մարդավարութիւն . . . . .	27
16. Տմարդութիւն . . . . .	28

## Գ. — Ծնողական պարտիք

17. Ծնողասիրութիւն . . . . .	30
18. Ընտանեւիրութիւն . . . . .	31
19. Յարգանք ծէրերու . . . . .	32
20. Ազգականի սէր . . . . .	33
21. Եղբայրական սէր . . . . .	34
22. Անառակութիւն . . . . .	35
23. Հնազանդութիւն . . . . .	37
24. Համբերութիւն . . . . .	38



**Դ. — Գարնական պարտիք**

25. Կրթասիրութիւն . . . . .	40
26. Ուսուցչի սէր . . . . .	41
27. Ընկերօրհրութիւն . . . . .	42
28. Բարի ընկերը . . . . .	43
29. Արդարասէր ուսուցչուհին . . . . .	44
30. Քաջալերութիւն . . . . .	46
31. Քսութիւն . . . . .	47
32. Զրպարտութիւն . . . . .	48

**Ե. — Մարդասիրական պարտիք**

33. Բարեսիրտ Գրիգորը . . . . .	50
34. Ողորմած քոյր մը . . . . .	51
35. Աղքատասիրութիւն . . . . .	52
36. Հիւանդ մը . . . . .	53
37. Անկեալ մը . . . . .	54
38. Տնանկնեբը . . . . .	56
39. Այց գծութեան տան . . . . .	57
40. Մեծն Ներսէս Ա. Հայրապետ . . . . .	58

**Զ. — Սննդական պարտիք**


41. Մաքրասիրութիւն . . . . .	60
42. Ճշդապահութիւն . . . . .	61
43. Աշխատասիրութիւն . . . . .	62
44. Ծուլութիւն . . . . .	63
45. Խոստմնապահութիւն . . . . .	64
46. Գոհունակութիւն . . . . .	66
47. Դժգոհութիւն . . . . .	67
48. Նախապաշարում . . . . .	68

**Է. — Սննդական մոլութիւնք**

49. Խնայողութիւն . . . . .	70
50. Ազգահութիւն . . . . .	71
51. Սակաւապէտ հայրը . . . . .	72
52. Շոթալութիւն . . . . .	73
53. Որկրամոլութիւն . . . . .	74
54. Գինեմոլութիւն . . . . .	75
55. Ծխամոլութիւն . . . . .	76
56. Ծխողին վախճանը . . . . .	78

**Ը. — ԸՆԿԵՐԱԿԱՆ պատրիկ**

57. Կեղծաւորութիւն . . . . .	79
58. Ճշմարտախօսութիւն . . . . .	80
59. Ստախօսութիւն . . . . .	81
60. Կառավարութիւն . . . . .	82
61. Գողութիւն . . . . .	83
62. Բուն յանցաւորը . . . . .	84
63. Զար ունակութիւնները . . . . .	85







2013

6-48





